ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՍՏՐԱԼԻԱ

ՄԵԿՆՈՒՄ

Ավարտելով իր հովվապետական-հայրապետական անդրանիկ այցելությունը Ֆրանսիա, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սույն թվականի փետրվարի 7-ին՝ հրաժեշտ տալով ֆրանսահայությանը, մեկնեց Ավստրալիա՝ ուղեկցությամբ գավականակիր Արտակ աբեղ. Տիգրանյանի, իր անդրանիկ հովվապետական այցելությունը տալու Ավստրալահայոց թեմի ժողովրդին:

ԺԱՄԱՆՈՒՄ ՍԻՆԳԱՊՈՒՐ

Փետրվարի 8-ին Նորին Սրբությունը ժամանեց Սինգապուր՝ հանդիպելու տեղի հայկական փոքրիկ համայնքի հետ, փոխանցելու իր հայրապետական պատգամը, ինչպես նաև տալու հայրական օրհնությունը:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին տեղական իշխանությունների, հայկական համայնքի ներկայացուցիչները, ինչպես նաև Հայ Եկեղեցու սպասավորները:

Ողջույնի հակիրճ խոսքերի փոխանակումից հետո, Վեհափառ Տերն առաջնորդվեց դեպի Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, հանդիպում ունեցավ տեղի հավատավոր հայորդիների հետ, տվեց իր հայրական օրհնանքը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 9-ը Սինգապուրի հավատավոր ժողովրդի համար անմոռանալի տպավորություններով ու հիշարժան իրադարձություններով առլեցուն մի օր էր: Երեկոյան տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն ու քարոզիչն էր Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատմության մեջ առաջին անգամն էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում էր Սինգապուր և պատարագ էր մատուցում Հայոց եկեղեցում, որ առաջին քրիստոնեական եկեղեցին է Սինգապուրում՝ կառուցված 1835 թվականին:

Պատարագին ներկա էին Սինգապուրի Ուղղափառ, Կաթողիկե և Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչները, հավատացյալ հայ ժողովուրդի կավակները, որոնցից ոմանք ժամանել էին Անգլիայից, Կորեայից, Ռանգունից և այլ երկրներից, ինչպես նաև եկեղեցու խնամակալ տիկին Հելեն Մետեան իր ամուսին պրն. Իոն Մետեսի հետ:

Իր քարոզում Հայոց Հայրապետը, քաջալերելով Սինգապուրի փոքրաթիվ հայությանը, ինչպես նաև արտահայտելով իր երջանկությունն այն առիթով, որ թեև փոքրաթիվ, այնուամենայնիվ հայի անկոտրուն կամքով ու անքակտելի հավատքով, հայրենիքից այսքան հեռու, վերջիններս կարողանում են ապրել հայաբար, պահպանել իրենց մայրենի լեզուն և քրիստոսավանդ հավատքը, Նորին Սրբությունն ասաց. «Ես անչափ ուրախ եմ այստեղ ձեզի հետ հանդիպելուս համար: Կրնա՞ք երևակայել, թե ինչպիսի պահեր ապրեցա, երբ հոս հնարավորություն ունեցա իմ խոսքը ձեզի ըսելու, պատգամելու, որ Հայրենիքեն հեռու ըլլալը ձեզի չհուսահատեցնի: Տեսլիքով ապրեցեք: Եվ Արագածի գագաթին կախված կանթեղի լույսով մշտատև լուսավորեք ձեր սիրտերը, միտքերը և ձեր անցնելիք ուղին: Ապրի՛ք, և եթե հայորեն ապրիք, հպարտ կապրիք»:

Ս. Պատարագի ընթացքում Վեհափառ Հոր ձեռքից Ս. Հաղորդություն ստացան եկեղեցում ներկա բոլոր հավատացյալները:

Ապա տեղի ունեցավ աջահամբույր:

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ» ԱՆՎԱՆ ՇՔԱՆՇԱՆ ՀԵԼԵՆ ՄԵՏԵՍԻՆ

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, Գարեգին Ա Կաթողիկոսը, հայանվեր ու ազգապահպան գործունեության համար, եկեղեցու ինամակալ տիկ. Հելեն Մետեսին պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալու» անվան շքանշանով:

Ծանոթացման կարգով ասենք, որ տիկ. Մետեսը երկար տարիներ ամուսնու՝ Իոն Մետեսի հետ բարեխղճորեն պահել ու պահպանել է Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի կառուցման 165-ամյակն է լրանում հաջորդ տարի, և որը տոնախմբվելու է մեծ շուքով:

Հայոց Հայրապետն իր բարեմաղթանքի խոսքում տեր և տիկին Մետեսներին ցանկացավ արևշատություն, քաջառողջություն և կենսախնդություն, որպեսզի նրանք կարողանան այսուհետև ևս իրենց այդքան գնահատելի գործունեությունը շարունակել, ինչպես նաև ապագայում իրականացնել իրենց մյուս ազգանվեր ծրագրերը:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ

Ապա Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Սինգապուրում հավատարմագրված դիվանագետներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և հայկական համայնքի ներկայացուցիչներ:

Այստեղ ևս, ծավալված մտերմիկ կրույցի ընթացքում, բարիգալատյան խոսքերի փոխանակումից հետո, Վեհափառ Տերը տվեց իր խրատ-խորհուրդները, հորդորեց հավատարիմ մնալ նախնյաց հավատքին և հայոց նորանկախացյալ Հայրենիքին:

Վեհափառ Հայրապետի այցելության առիթով Սինգապուր էին

ՇԿՅՍԻՈՈՒՍՏ ՅՍԵԿՅԵ Ս. ԿՅՈՒՍԱՆԵՂՎՈ ԵՈՅՈՏՈՒ ԷՈՍՈՂՈ ԻՑ ԺՅՈՒՍՈ

ԸՍՍՑՁՂՁՈՈ ԸՍՍԵՁՅՍՆՈՆՈՊ ՀՍՍՑՁՆՁԿՁ...



ԻՍԱԳՂԱՍԻՈՏՊԱՍ ՁՈՂՈՍՈՒՔ ԿՂՈՂՎՈՒԹ

ԻՍԱԳՎՈՒ ՂՈՒԵԱՎՍՂԳՑԵՈ ՂՈՒԵԱՎՍԺՎՈ ՂՎՎՍՂ ԻՁ ԻՍԱԳՂՈՍԱԳՎՈԺ

ՂՎԵՈԵՇՈ ՁՈՒՍՈԱՈՇՎԱՉ ԺՏԳԱՈՍԱԵՈԷ ՍՈՓՈԷԳԻ ՝ԿՂՈՂՎՈՒԹ



ՎՏՁԱՆՈՒԵՈՒ ՍՈՓՈՒՁԻ ԻՎՏՈԱ Վ ՑՎՈՆՍԻ ՎՂՈԵՂՏՈՀՄՄԻՍԵՂ ՁՇՈՒ

ՂՈԱՈՁՆ ՎՂՈՂՈՀՎՂ ՂԻՍԵՄԻՍՂՁԻՍՆՂՁ ՝ՆՂՈՂՎՈՄ

ՌԻՍՑԱՆՑԻՑ ՂԻՍԷՄԻՍՄՈՒ ՝Ո ՎԷՑՂՆՎՈ ՌԻՍՄՍԻՈՌՎԿ

ժամանել Անգլիայից Տեր և Տիկին Փոլ Գյուլբենկյաններն ու Տեր և Տիկին Հայկ Դիդիկյանները, որոնք մասնակից եղան բոլոր ձեռնարկներին:

ՄԵԿՆՈՒՄ ԹԱԻԼԱՆԴ ԲԱՆԳԿՈԿԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 11-ին Վեհափառ Հայրապետը Սինգապուրից մեկնեց Բանգկոկ: Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Աղան արք. Պալիոկյանը, Չինաստանում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Ապատ Մարտիրոսյանը, Թաիլանդում Լիբանանի արտակարգ և լիապոր դեսպան Վաչե Նյուրբատլյանը, հայ գաղութի պատասխանատու ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Բարեողջույնի խոսքերից հետո, շքախումբը Նորին Սուրբ Օծությանն առաջնորդեց դեպի հյուրանոց:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ «ՇԵՐԱԹՈՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան «Շերաթոն» հյուրանոցի ընդարձակ սրահում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի այցելության, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում էին 120 հրավիրյալներ:

Ներկաների թվում էին Աղան արք. Պալիոկյանը, Բանգկոկի քաղաքապետի ներկայացուցիչը, պապական նվիրակ Բուենսոն արքեպիսկոպոսը, Չինաստանում Հայաստանի ժամանակավոր հավատարմատար Ապատ Մարտիրոսյանը, Թաիլանդում Լիբանանի արտակարգ և լիապոր դեսպան Վաչե Նյուրբատլյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ և հոգևորականներ, հայկական գաղութի ներկայացուցիչներ, որոնց թվում էին Բրազիլիայից այստեղ ժամանած ազգային բարերար Տեր և Տիկին Ներսես և Լենա Վարդանյանները, որոնք մասնակցեցին բոլոր միջոցառումներին:

Բարիգալստյան և ողջույնի խոսքեր արտասանեցին Տիկ. Հելեն Փափազյանը և Հոնգկոնգի հայերի անունից գաղութի առաջնորդող դեմքերից պրն. Պապ Գևորգյանը: Հավարտ պաշտոնական ճաշի, ներկաներին իր օրհնաբեր խոսքն ուղղեց Գարեգին Ա Կաթողիկոսը: Ներկայացնելով հայ ժողովրդի անցած ու ներկա ուղին, Նորին Սրբությունը հիմնական շեշտը դրեց մեր վաղվա օրվա վրա: Մեկանից յուրաքանչյուրի, աշխարհի որ ծագում էլ որ ապրելիս լինենք, անմնացորդ նվիրումի ու ջանքերի շնորհիվ միայն կարող է վեր հառնել ու ամուր հիմք ունենալ Հայաստան աշխարհը: Ամեն մի անցումային շրջան, անկասկած, ունի իր դժվարությունները, սակայն դրանք փոքրանում ու չնչին են դառնում, երբ ժողովուրդը միակամ է, ունի մեկ սիրտ և բռունցքված է: Ոչ ոք չի կարող մեկանից խլել այն, ինչ

ավանդաբար, որպես կտակ, ժառանգել ենք դարերից և անպայմանորեն տանելու ենք դեպի գալիք դարերը,- ասաց Վեհափառ Հայրապետը, խորին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և հյուրասիրության համար: Նորին Սրբությունը անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերին և գործունեությանը, որ նոր թափ է առել Հայաստանի ապատության և անկախության այս շրջանում: «Ամեն մի հայ իր բաժինն է բերելու համազգային այս առաքելությանը ի սեր մեր Եկեղեցու կարգացման»,_եզրափակեց իր խոսքը Վեհափառ Հայրապետը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Այցելության հաջորդ օրը, փետրվարի 12-ին, տեղական ժամանակով առավոտյան ժամը 10.00-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Աղան արք. Պալիոկյանի, գավազանակիր Արտակ աբղ. Տիգրանյանի և պրն. Պապ Գևորգյանի, այցելեց Բուդդայական Հոգևոր Կենտրոն և հանդիպեց հոգևոր առաջնորդի հետ:

Երկուստեք փոխանակված ողջույնի ջերմ խոսքերից հետո, ծավալվեց մտերմիկ զրույց, հընթացս որի խոսակցության հիմնական թեման դարձավ երկխոսության անհրաժեշտությունը, բազմակրոն աշխարհում համերաշխության ճանապարհին ձեռք բերված նվաճումները, Հայոց աշխարհի ներկա կացությունը, ինչպես նաև Հայ Եկեղեցու կատարելիք դերը՝ իր հավատավոր ժողովրդի կյանքում ծագած դժվարությունների հաղթահարման գործում:

Ամենայն Հայոց Հայրապետը մեծ ոգևորությամբ պատմեց նաև Երևանում կառուցվող Մայր եկեղեցու, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով մեծածավալ միջոցառումների մասին, որոնք տեղի են ունենում կամ ունենալու են ոչ միայն հայրենի երկրում, այլև ողջ աշխարհով մեկ, ուր հայ կա:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, կեսօրին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, քաղաքի ամենամեծ հյուրանոցներից մեկի սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ Լիբանանի դեսպան պրն. Վաչե Նյուրբատլյանի կողմից: Ճաշկերույթին ներկա էին Թաիլանդի թագավորական պալատի դիվանապետը, Թաիլանդում հավատարմագրված դիվանագետներ, քույր Եկեղեցիների, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչներ:

Մեծարգո դեսպանը մեծ ոգևորությամբ ողջունեց Նորին Սուրբ Օծությանը՝ նախ շնորհակալություն հայտնելով նրա շնորհաբեր այցելության համար, ինչպես նաև բարձր գնահատեց ապգանվեր ու հայրենասեր Հայրապետի գործունեությունը՝ հանուն Մայր Աթոռի վերաշխուժացման, վերանկախացյալ Հայաստանի կորացման, հարապատ ժողովրդի բարօրության, բարգավաճման և խաղաղ արշալույսների:

Փոխադարձ խոսքում Վեհափառ Տերը նույնպես շնորհակալություն հայտնեց հարգարժան դեսպանին, որին ծանոթ էր դեռևս Լիբանանից, ինչպես նաև բոլոր ներկաներին՝ ցուցաբերված ջերմության ու սիրո համար և ասաց, թե որքան էլ ինքը ջանքեր ներդնի, միայնակ ոչնչի հասնել չի կարող, կամ եթե հասնի էլ, ուրեմն շատ փոքր կլինի հաջողությունը: Հաջողության կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ իր կողքին, մի մարդու նման, կանգնի նաև հայ ժողովուրդը՝ թեև օտար ափերում, հայրենիքից հեռու, այնուհանդերձ կարողանա պահել ու պահպանել իր մայրենի լեզուն, կավակներին տա հայեցի դաստիարակություն և նրանց անմեղ հոգիներում վառ պահի սերն առ Հայրենիքն ու հարազատ Եկեղեցին:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՏԵՂԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ճաշից հետո, երեկոյան, Բանգկոկի Անգլիկան եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էին քույր Եկեղեցիների, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծաթիվ հավատավոր հայորդիներ, որոնցից ոմանք ժամանել էին Կորեայից, Հոնգկոնգից, ԱՄՆ-ից, Բրազիլիայից և այլ երկրներից: Օրվա պատարագիչն էր Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Աղան արք. Պալիոկյանը:

Հընթացս մատուցվող Ս. Պատարագի, օրվան պատշաճող քարոզ խոսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:

Նախ, դիմելով ներկաներին, Աղան Սրբազանը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը՝ Բանգկոկ ժամանման ուրախ առիթով, ապա ավելացրեց.

«Սիրելի եղբայրներ և քույրեր, այսօր մեզի համար մեծ ուրախություն է մեր մեջ ունենալ Վեհափառ Հայրապետը, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս այցելությունը Բանգկոկ քաղաքին իր պատմական արժեքը և կարևորությունը ունի, որովհետև ոչ միայն Գարեգին Կաթողիկոսին համար, այլ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատմության մեջ առաջին անգամն է, որ հոգևոր Պետը Հայաստանյայց Եկեղեցվո այս ափերը կուգա իր հայրական օրհնությունը տալու և իր հայրապետական պատգամը փոխանցելու այս շրջանին մեջ ցրված մեր եղբայրներուն ու քույրերուն, որոնք կարոտ են, ծարավ են հայ խոսքին, հայ հավատքին և իրականության: Այս պատմական այցելությունը ամեն մեկուն կյանքին մեջ իր դրոշմը պետք է դնե, իր կարևորությունը պետք է ունենա, որովհետև այս պահեն սկսյալ ձեզի համար անկյունադարձային ժամանակ մըն է ձեր հայկականությունը վերանորոգելու, ձեր հայ քրիստոնյայի հավատքը վերակերտելու առիթը և պատեհությունն է: Ու այս առիթով կհրավիրեմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը իր հայրապետական խոսքը և օրհնությունը բաշխելու ձեր բոլորին»:

Ապա ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Ամենայն Հայոց Վեհափառը՝ ի մասնավորի ասելով.

«Սիրեցյալ և հավատացյալ զավակունք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, որ կապրիք Մայրագույն Արևելքի այս երկիրներուն մեջ, ի Թաիլանդ և ուրիշ երկիրներ այս տարածաշրջանին մեջ:

Ես փառք և գոհություն կուտամ Աստուծո, որ ինձի շնորհեց, առաջին անգամ ըլլալով իմ կյանքիս մեջ, գտնվիլ այս երկիրը և նայիլ այս երկրի բնակչության և անոնց մեջ տեսնել հայու դեմքեր, հայ անունով, հայու հոգիով, հայու հավատքով, հայու լեզվով, հայու ճակատագրով, հայու տառապանքով և հայու տեսիլքով:

Փառք Քեզ, Տեր, որ արժանի ըրիր ինձի այս հողին վրա, այս հեռավոր երկրին մեջ աղոթակից դառնալու իմ եղբայրներուս և քույրերուս հետ Անգլիկան Եկեղեցվո այս տաճարին կամարներուն տակ:

Այսօր ես կուզեի իմ խոսքս այստեղ հայերեն հնչեր, բայց որովհետև ունինք մեր մեջ շատ հարազատ բարեկամներ, որոնք մեր հայերեն լեզվով դժվար պիտի հասկնան ինձի, ատոր համար պիտի ջանամ իմ քարոզը այսօր անգլերեն լեզվով տալ մեր սիրեցյալ ժողովրդին»:

Այնուհետև Նորին Սրբությունը քարոզը շարունակեց անգլերեն լեզվով: Վերջում վերադառնալով ուկեղենիկ մայրենիին, Ամենայն Հայոց Հայրապետն այսպես եզրափակեց իր խոսքը.

«Սիրելի եղբայրներ և քույրեր, սրտանց կաղոթեմ, որ առաջին անգամն իբրև Կաթողիկոս կուգամ, որ ձեր կյանքը ըլլա առատ, երջանիկ, ամեն ինչը մեկի տեղ տասը ունենաք: Բայց երբեք մի մոռնաք, որ եղբայրներ և քույրեր ունիք, որոնք կարոտ են և կարոտ են բոլորիդ: Եվ մեր միասնությունն է, մեր ամբողջականությունն է, իրարու աչքերու մեջ մեր դրախտը տեսնելու քաջությունն է, որ պիտի ըլլա մեզ ճշմարտորեն հայ:

Ձեզի կմաղթեմ բոլորիդ երջանիկ և ծաղկուն կյանք և մեր ազգին, Մայր Հայրենիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ձեր բոլորիդ զորակցությունը հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հընթացս մատուցվող Ս. Պատարագի Ս. Հաղորդություն ստացան եկեղեցում ներկա բոլոր հավատացյալները:

Վերջում կատարվեց հոգեհանգստյան կարգ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԴԻՆԱԼ ՄԻՇԵԼ ՄԻԲՇՆԱՅԻ ԿԻԴ ԲՈՆ ՉՈՒԻ ՀԵՏ

Այցելության երրորդ օրը, փետրվարի 13-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետն իրեն ընկերակցողների հետ այցելեց Բանգկոկի Կաթողիկե Եկեղեցու կարդինալ Միշել Միշնայի Կիդ Բոն Չուին: Նորին Սրբությունը մեծ ու հանդիսավոր թափորով առաջնորդվեց դեպի Մայր Տաճար: Ավագ Խորանի առջև մայրենի լեզվով Նորին Սրբությունն իրեն ընկերակցողների հետ աղոթք վերառաքեց առ Աստված, ապա հնչեցին Հայ Առաքելական Եկեղեցու շարականներ:

Այնուհետև փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր: Նախ խոսեց կարդինալ Միշել Միշնայի Կիդ Բոն Չուն՝ հատկապես շեշտելով.

«Ձերդ Սրբություն, հարազատ եղբայր ի Քրիստոս,

Ինձ համար անչափ ուրախություն, ցնծություն, ինչպես նաև մեծ պատիվ է այսօրվա Ձեր յուրօրինակ այցելությունն այս հոյակերտ Մայր Տաճար:

Բանգկոկի հոգևոր կյանքում նշանավոր երևույթ է Ձերդ Սրբության ներկայությունը, ուստի մենք երախտապարտ ենք և ի սրտե շնորհակալ Ձեր այցելության համար: Բարի գալուստ Ձեզ և Ձեր ուղեկիցներին:

Ձեր շնորհաբեր այցը իմաստալից նշանակություն ունի Թաիլանդի կաթողիկե Եկեղեցու համար, որովհետև մենք այն գնահատում ենք որպես եղբայրության հոգևոր արտահայտություն, ինչպես նաև որպես մեր Եկեղեցու հետագա բարօրության դրսևորում:

Ես ուրախ եմ ինձ ընձեռնված այս պատեհ առիթի համար՝ փոխանցելու եղբայրական ողջույններս Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ուստի Ձերդ Սրբությանը այս պատեհ առիթով ցանկանում եմ անչափ երջանիկ ու արգասալից կյանք Ձեր առաքելության ընթացքում, ինչպես նաև Ամենակարող Տիրոջ շնորհն ու օրհնությունները»:

Այնուհետև փոխադարձ խոսք ասաց Նորին Սրբությունը: Շնորհակալություն հայտնելով կարդինալին բարեմաղթանքների համար, Հայոց Հայրապետը ևս ցանկացավ Հայ և Կաթողիկե Եկեղեցիները միշտ տեսնել եղբայրական քրիստոսավանդ սիրո հարաբերության մեջ, որպեսզի փոխադարձ համագործակցության ու համեղբայրության հենքի վրա բարձրանա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այժմ և հավիտյանս հավիտենից:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Մայր Տաճարում կատարված կանոնական աղոթքից և երկուստեք փոխանակված բարեողջույնի խոսքերից հետո, հանդիսավոր թափորն ուղղվեց դեպի առաջնորդարան, որտեղ, ի պատիվ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի, տրվեց պաշտոնական ճաշ:

Ճաշկերույթին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, հոգևոր առաջնորդներ, ինչպես նաև պաշտոնատար այլ անձինք:

Այստեղ, հյուրասիրության սեղանի շուրջ, ոչ միայն երկուստեք հնչեցին բարեմաղթանքի խոսքեր, լավագույն ցանկություններ, այլև փոխանակվեցին հուշանվերներ՝ ի նշան երկու Եկեղեցիների եղբայրության ու բարեկամության:

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

Կաթողիկե Եկեղեցու առաջնորդարանում տրված պաշտոնական ճաշից հետո, Նորին Սրբությունը հանդիպեց տեղական Կաթոլիկ հեռուստածրագրի աշխատակիցների հետ և ունեցավ ճեպազրույց: Գարեգին Ա Վեհափառը հանգամանալից ներկայացրեց իր հայրապետական այցելության հիմնական նպատակները, Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Սրբազան Քահանայապետ

Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպումներն ու ստորագրած համատեղ հայտարարությունը, անդրադարձավ առաջիկա ծրագրերին:

ՄԵԿՆՈՒՄ ԱՎՍՏՐԱԼԻԱ

ԺԱՄԱՆՈՒՄ ՍԻԴՆԵՅԻ ՕԳԱՆԱՎԱԿԱՅԱՆ

Սինգապուր և Բանգկոկ կատարած եռօրյա կարճատև այցելությունից հետո, փետրվարի 14-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մեկնեց Ավստրալիա՝ Սիդնեյ:

Օդանավը ուրբաթ օրը, երեկոյան ժամը 9.15-ին, վայրէջք կատարեց Սիդնեյի միջազգային թռիչքների օդանավակայանում, ուր Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել թեմական առաջնորդ Աղան արք. Պալիոկյանը՝ թեմի հոգևորականներով, Ավստրալիայի եկեղեցիների Ազգային Խորհրդի Ընդհանուր Քարտուղար և Վեհափառ Հայրապետի երկար տարիների անձնական բարեկամ Դեյվիդ Գիլը, Հայ Կաթողիկե համայնքից՝ հայր Անտոն վրդ. Թութունջյանը, հայկական ավանդական երեք կուսակցությունների, Ավստրալիայի քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղի նախագահը և հպարտավոր հայորդիներ:

Օդանավակայանում հավաքված խուռներամ հայությունը ծաղկեփնջերով և ծափողջույններով դիմավորեց իր սիրելի Հովվապետին:

Պատվո հյուրերի ապաստարահում Աղան Սրբազանը իր խոսքում հատկապես ասաց.

«Հանուն մեր գաղութի թեմական խորհուրդի, բարի գալուստ կմաղթեմ Ձեզի:

Վեհափառ Տեր, այստեղ կգտնվի թեմական խորհրդի կազմը, Սիդնեյի եկեղեցվո վարչութենեն ներկայացուցիչներ, քահանա հայրերը, ինչպես նաև Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական Եկեղեցվո հոգևորականները, Ավստրալիո Եկեղեցիների Խորհուրդի քարտուղարը, Հայ Հեղափոխական Դաշնակցության, Ռամկավար Ազատական կուսակցության, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության ներկայացուցիչները, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ներկայացուցիչը:

Գաղութը անհամբեր կսպասեր Ձերդ Սրբության այցելության, Ձեր օրհնաբեր այցելության: Վստահ եմ, որ հառաջիկա օրերու ընթացքին ոչ միայն օրեր են, որ պիտի հաշվվին, այլ տոնական և պատմական օրեր են, որ պիտի արձանագրվին Ձեր ներկայությամբ այս գաղութին մեջ:

Բարի եկած եք և բարի առաքեցաք մեր պատվական երկիրը»:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սուրբ Օծությունը.

«Սիրելի սրբազան, հոգևոր եղբայրներ, հարգելի ներկաներ և բարեկամներ, ազգայիններ, մեր ժողովուրդին մեջ կամավոր ծառայության հանձնառությունը ստանձնած սիրելի ներկայացուցիչներ բոլոր կազմակերպությունների.

ԲԱՆԳԿՈԳԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ ՍԻԴՆԵՅ

Ես նախ կուզեմ փառք տալ Աստուծո, որ ինձի շնորհեց այս առիթը, որ ես անգամ մը ևս ըլլամ այս երկրին մեջ Ավստրալիո և հաղորդակից դառնամ այստեղ ապրող և իր հայությունը արժեցնող մեր ժողովուրդի զավակներուն հետ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև և առաջնորդ սրբազանի, թեմական խորհրդի և համայնքային բոլոր կազմակերպությանց նվիրյալ աշխատանքներու բարիքներով:

Ինձի համար Ավստրալիան բոլորովին նոր երկիր չէ, բոլորդ ալ գիտեք, բայց նորը այն է, որ ես կուգամ մեր նոր Հայաստանեն, նորը այն է, որ ես կուգամ նորոգյալ մեր Սուրբ Աթոռ Էջմիածնեն: Երկիրները նույնն են, բայց ժողովուրդները փոխված են, կացությունները փոխված են և կուգամ ձեզի նոր պատասխանատվությամբ, շատ ավելի ծանր պատասխանատվությամբ , քան ինչ որ եկած էի ասկե առաջ:

Ասկե առաջ եկած էի Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդի անունով և որպես պետը այն պատվիրակության, որ ժամանած էր այստեղ: Այսօր կուգամ ձեզի իբրև ձեր հոգևոր հայրը, այն անձը, որ ամենեն ծանր պատասխանատվությունը ստանձնած է այսօր Աստուծո կամքով և մեր ժողովուրդին ընտրությամբ, մեր նոր ժամանակներու մեջ, մեր պատմության այս նոր դարաշրջանի սկիզբը՝ մեր Եկեղեցին առաջնորդելու համար, բոլոր մեր հոգևոր և աշխարհական գործակիցներով դեպի այն հորիզոնները, ինչ որ Աստված կուզե որ երթանք, ինչ որ պատմությունը կպահանջե մեզմե, որ երթանք և ինչ որ մեր խիղճը մեր վրա պարտք կդնե, որ երթանք դեպի հայոց առավել պայծառ ապագան:

Այսօր, դուք իբրև ներկայացուցիչները բոլոր հաստատության և կազմակերպությանց, կուզեմ, որ իմ թարգմանն ըլլաք այն գաղափարին, որ այս օրերուն մեր ժողովուրդի ընդհանուր կարգախոսը կրնա ըլլալ միայն և միայն աշխարհին ներկայանալ իբրև մեկ ուժ, և մեկ ազգ և մեկ Եկեղեցի, որովհետև կանցնինք շատ վճռական, որոշադրիչ շրջանեն:

Հինգ տարին անցավ մեր Հանրապետության, բայց գալիք հինգ տարիները ի՞նչ կրնան ըլլալ, հորիզոնին վրա դեռ ամպեր կան, բայց մենք պիտի գիտակցինք, որ այս ամբողջությամբը, մեկ հայությամբը պիտի արժեցնենք մեր ձայնը և՛ եկեղեցականորեն, և՛ աշխարհականորեն, և՛ քաղաքականորեն, և՛ պետականորեն մեր գալիք սերունդներու համար: Կուզեմ, որ դուք իմ թարգմանը հանդիսանաք և այս ոգիով ձեռք-ձեռքի տված, սիրտ-սիրտի կապած շարունակենք այս նվիրական առաքելությունը, և ապագա սերունդները կօրհնեն մեզ՝ փոխանակ անիծելու»:

Ապա Վեհափառը ներկաներին ուղղած բարեողջույնի իր խոսքն ավարտեց անգլերեն լեզվով:

ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 15-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.00-ին, Վեհափառ Հայրապետը Զացվուդի Վիկտորիա փողոցից, եկեղեցու դպրաց և քահանայից դասի առաջնորդությամբ, շրջապատված հավատացյալների հոծ բազմությամբ, հրապարակով շարժվեց դեպի Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցի:

«Հրաշափառով» և հանդիսավոր թափորի ուղեկցությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց տաճար:

Այսպես վեհաշուքորեն Ամենայն Հայոց Հայրապետն առաջնորդվեց դեպի Ավագ Խորան, ուր կրկին անգամ, այս անգամ արդեն ողջ հավատավոր ժողովրդի ներկայությամբ, ունկնդրեց Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Աղան արք. Պալիոկյանի բարիգալստյան խոսքը.

«Ձերդ Սրբություն.

Ավստրալիո երկրի և ավստրալահայ գաղութին համար հոգեկան հրճվանք է Ձերդ Սրբությունը ընդունիլ այս երկրին մեջ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Պատմական երևույթ է Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջին այցելությունը այս հեռավոր ափերուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարազատ զավակներուն, որոնք տարիներե ի վեր իրենց հոգիին մեջ ծրարած են գեղեցիկ գաղափարն ու սերը մեր հավատքի կենտրոն ու Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ու այն օրեն, որ Դուք նստեցաք Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին վրա, կարծեք Հայաստանյայց Եկեղեցին նոր զգեստ մը զգեցավ, նոր շունչ մը առավ ու անոր շնորհիվ եկեղեցական և ազգային կյանքը բոլորովին նոր երևույթ ստացավ: Ազատ և անկախ Հայաստանին մեջ առաջին ազատ և անկախ Կաթողիկոսական ընտրությունն էր, որ տեղի ունեցավ 1995 թվականին ու Դուք ընտրվեցաք որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ բազմելու համար այն պատմական և առաքելական Աթոռին վրա, որ մեր ժողովուրդի հոգիին և սրտին ամենամոտիկ հաստատությունն է ու հավատքի կենտրոնը:

Ձեր այցելությունը այս Ավստրալիո ափերուն ակնկալից կերպով կսպասվեր մեր ժողովուրդին կողմե, որովհետև քաջ գիտեին, թե Ձեզ հետ կբերեք ոչ միայն Ձեր օրհնությունը, այլև մեր նախնիներու, 130 Կաթողիկոսներու օրհնությունը, ինչպես նաև Ս. Էջմիածնի օրհնությունը: Անշուշտ Ձեր անձին հմայքը, Ձեր մեծությունը, Ձեր հեղինակությունը մեզի համար ուրախություն է և հոգեկան հրճվանք: Ու վստահ եմ, որ հառաջիկա օրերը, որ պիտի անցնեք մեր զավակներուն հետ, Ձեր զավակներուն հետ, հոգեկան վերանորոգման ու ազգային գիտակցության առիթ պիտի ծառայեն, որպեսզի նորոգենք մեր հավատքը, վերանորոգենք մեր ազգային գիտակցությունը ու անով կարողանանք մեր երթը շարունակել այս հեռավոր ափերուն վրա որպես հայ, որպես քրիստոնյա և հավատարիմ քաղաքացիներ այս երկրին:

Ձեր այցելությունը, ըլլա ատիկա եկեղեցի, ազգային հաստատություն, կրթական հաստատություն, անկասկած, որ իր դրոշմը պիտի դնե ժամանակի ընթացքին ու արդեն իսկ խանդավառությունը այնպիսի աստիճանի հասած է, որ կարծեք թե մեր մեջ կգտնվեիք շաբաթներե ի վեր: Ահա Ձեր զավակները, ահա Ձեր մանուկները, օրհնեցեք զիրենք, որպեսզի Ձեր օրհնությունը իրենցմով բաժնվի համայն հայության, որ կգտնվի Ավստրալիո մեջ:

Հանուն Թեմական Խորհուրդին, Եկեղեցական մարմիններուն, եկեղեցականներուն և ժողովուրդին կըսենք՝ բարի առաքեցաք Հովվապետ Հայոց, օրհնեցեք Ձեր զավակները Ձեր Հայրապետական մականով, Ձեր Հայրապետական խաչով և Ձեր Հայրապետական օրհնությամբ»:

Այնուհետև, հավարտ առաջնորդ Սրբազանի խոսքի, գաղութի կարոտաբաղձ հայությանն իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սրբությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

Սիրելի Առաջնորդ Սրբազան,

Հոգևորական Հայրեր,

Թեմական իշխանության ներկայացուցիչներ և թանկագին զավակներ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո,

Իմ խոսքը ձեզի ուղղելեն առաջ, ես սրտի պարտք կը զգամ իմ շրթներես դուրս եկող բառերը այս առավոտ դեպի երկինք առաքելու և գոհություն, շնորհակալություն և երախտագիտություն հայտնելու առ Բարձրյալն Աստված, որ Ինձի շնորհեց հոգելից այս պահը, գոտեպնդիչ այն հանդիպումը, որ ես ահա կունենամ Ավստրալիո մեջ ապրող մեր հավատացյալ ժողովուրդին հետ:

Ոնէ հոգևորական երկու նայվածք ունի, մեկը՝ դեպի երկինք ուղղված է, և մյուսը՝ դեպի երկիր, մեկը՝ դեպի Աստված և մյուսը՝ դեպի ժողովուրդը, որովհետև հոգևորականը կամուրջն է երկինքի և երկրի միջև, կապն է Աստուծո և ժողովուրդին միջև: Եվ հետևաբար, ես փառք և գոհություն կուտամ Երկնավոր Հորը, որ այս պահը ընծայեց ինձի, որ ըլլամ թարգմանը Աստուծո մեր Եկեղեցվո մեջեն, մեր Եկեղեցվո հայրերու սուրբ ավանդներեն, մեր Սրբություն Սրբոց, մեր բոլորի անխտիր, բոլոր հայերու՝ ազգային սրբազան ավազանեն մկրտության, որ Սուրբ Էջմիածինն է, ուր մեր ազգը ծնավ իբրև քրիստոնա ազգ 1700 տարիներ առաջ, որ ես կսիրեմ կոչել հայոց ազգի Բեթղեհեմը: Հայկական Բեթղեհեմն է Ս. Էջմիածինը, ուր մենք առաջին անգամ թագավորով և Եկեղեցվո առաջնորդով քրիստոնեությունը պաշտոնապես ընդունեցինք որպես մեր ազգի կրոնը:

Եվ այսօր, այս աղոթքի զգացումով, առ Աստված կողջունեմ ձեզ բոլորդ, և կհայտնեմ ձեզ բոլորիդ, որ զգաք բոլորդ, յուրաքանչյուրը իր պատասխանատվության շրջագծին մեջ, յուրաքանչյուրն իրեն հատուկ ձևով և չափով, յուրաքանչյուրդ զգա որ մենք այսօր պատմության մեջեն կանցնինք նոր դարաշրջանի մը ճանապարհով:

Ես եղած եմ այստեղ տասը տարիներ առաջ, բայց այսօր չեմ և չեմ կրնար ըլլալ այն անձը, որ էի ասկե տասը տարիներ առաջ: Ձեզմե ոչ ոք, եթե անկեղծորեն հայ է և ճշմարտորեն քրիստոնյա է, չի կրնար մնացած ըլլալ այն, ինչ որ էր տասը տարիներ առաջ, որովհետև հայ ժողովուրդի պատմական վայրիվերումներուն, անկումներուն և վերականգնումներու շղթային վրա, հանկարծ լուսավոր օր մը բացվեցավ և մեր հայրերու երազը, մեր նահատակներու կտակը կյանք առավ, մեր բոլորի Մայր Հայաստանը վերագտավ իր ազատությունը և անկախությունը, որուն սպասումը մեր ժողովուրդը կպահեր իր ինքնության, գիտակցությանը մեջ ամուր: Հետևաբար եկեք բոլորս ալ, մեր հոգիներուն մեջ, ծունկի գանք Աստուծո առջև և ըսենք, փա՜ռք Քեզ Աստված, երրորդ հազարամյակը կբացվի նոր արշալույսով մեր հայոց դարավոր պատմության մեջ: Կզգա՞ք, կզգա՞ք այս հեղաշրջության հիմնական փոփոխության ազդեցությունը, ներգործությունը, հրաշակերտությունը ձեր հոգիներուն մեջ: Եթե չեք զգար, ափսոս, կնշանակե քայլ չեք պահեր հայոց պատմության հետ:

Փա՜ռք Քեզ Աստված, կաղոթենք Քեզի, որ այնպես ընես, որ այս Հանրապետությունը դառնա ամուր, արմատներով խորունկ, զարգացումով հառաջընթաց, որպեսզի մենք մտնենք երրորդ հազարամյակը պայծառ ճակատով և աշխարհի մեջ մեր ազգային ինքնության հստակ ըմբռնումով և պետական ինքնարտահայտության ոճով, որ այսօր ազգերու համար շատ կենսական պայման մըն է, իրենց ներկայությունը զգացնելու համար աշխարհին:

Սիրելի հավատացյալներ, Աստված իմ խոնարհ, համեստ և տկար անձիս մեծ պատիվ մը ըրավ, ես Կաթողիկոս ընտրվեցա Ամենայն Հայոց Գահին վրա, ի Սուրբ Էջմիածին, առաջին անգամ ըլլալով երբ ազատ ու անկախ Հանրապետություն մը դարձած էր մեր Մայր Հայրենիքը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը այլևս ազատ կեդրոն է, ուրկե 17 դարեր, 1700 տարիներ ձեզի կնային, որպեսզի Քրիստոսի ուսուցումները, մեր Սուրբ հայրերու ավանդությունները հիշատակ չմնան անցյալի, այլ դառնան ներգործոն ուժ մեր այսօրվան և մեր գալիքին: Ես որ այժմ, ահավասիկ շուրջ երկու տարիներե ի վեր Հայաստան կապրիմ, կզգամ, որ մեր ժողովուրդը անցնող 10 տարիներին վարժվեցավ Հայոց Եկեղեցիին նայելու իբրև անցյալի ժառանգություն: Հուշարձան էին եկեղեցիները, բայց Էջմիածինը հուշարձան չէ, անցյալը հիշեցնող կոթող մը չէ, թանգարան մը չէ, կյանք մըն է, առաքելություն մըն է, ժողովուրդի մեջ Աստված թարգմանելու կոչված ամենասուրբ և ամենանվիրական կեդրոն մըն է: Եթե երբեք այսօր, մեր ազատ ու անկախ պայմաններու տակ, մեր Մայր Աթոռը իր մայրական կաթը պիտի չտա մեր ժողովուրդին, և միայն անցյալի հուշարար ըլլա, մեզի համար մեծ նշանակություն չունի, որովհետև ազգ մը, ուր ալ ըլլա և ինչ որ ալ ըլլայ, եթե միայն անցյալով ապրի, դատապարտված է մահվան: Անցյալը պիտի չմոռնա, բայց անցյալեն նոր ուժ պիտի քաղե, այսօրը պայծառացնելու և վաղը առավել ևս ծաղկեցնելու նախանձախնդրությամբ, ոգևորությամբ և ազգային վճռական քաղաքականությամբ: Այլևս կբավե, կբավե, որչափ ետև նայեցանք:

Մեր հայրերով ինքզինքնիս մխիթարեցինք. ի՛նչ պիտի ընենք մենք հիմա, այս է հարցը, ոչ թէ ինչ ըրած են մեր հայրերը, մենք անոնցմե բան մըն ալ չենք կրնար փոխել, լավ կամ գեշ: Բայց դուք Աստուծո պիտի նայիք, ոչ թե ձեր հայրերու հաշվույն, այլ ձեր հաշվույն:

Այս առավոտ, երբ իմ առաջին խոսքս կուղղեմ ձեզի և կուզեմ իմ խոր շնորհակալությունները հայտնել ձեր առաջնորդ Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին, Թեմական Խորհուրդին և Եկեղեցական դասին ու բոլոր կազմակերպություններուն, որոնք ազնվությունը ունեցան մեզ հրավիրելու և ժողովուրդին հետ հաղորդության մեջ դնելու:

Իմ հոգևոր ծառայության մեջ ես ժողովուրդին հետ հաղորդությունը կնկատեմ կենսական նախապայման: Այն հոգևոր կամ քաղաքական առաջնորդը, որ իր ժողովուրդը չի ճանչնար, չի կրնար այդ ժողովուրդին ծառայել այն արդյունավորությամբ, ինչ որ կսպասվի: Ես չեմ ուզեր, որ աշխահի չորս ծագերուն՝ Հայաստանեն մինչև Ավստրալիա տարածված, մեր թեմերու ժողովուրդը ինձի համար ըլլա սոսկ թուղթի վրա նշված թիվ և անուն: Ես կուզեմ զգալ երակներուս մեջ այն, ինչ կզգա մեր ժողովուրդը: Եվ այսօր ես եկած եմ որպես Աստուծո խոնարհ ծառաներեն մեկը, մեր Եկեղեցվո առաջին սպասավորը, որպեսզի ճանչնամ ձեզ, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս և նաև ճանչցվիմ ձեզմե, որպեսզի հաղորդություն ըլլա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և

ՌԺՍՂՈՅՈՔՅՈՒ «ՂՈՒՑՈՒՄՇՈԵ ՎՓՍՈ ԻՑ ԿՈՉՅՈ»



ՄԻՍՊՈՅՈՔՅՈՒ ՑՈՇՊՈՍԵՅՈՒ



մեր ժողովուրդին միջև: Կուզեմ, որ հառաջիկա մի քանի օրերը, երբ հոս պիտի ձեզի հետ ըլլամ, ձեր դպրոցներուն, ձեր սրահներուն և եկեղեցիներուն մեջ, այդ բոլորը առիթներ ըլլան բոլորիս անխտիր վերանորոգման:

Այս է իմ այսօրվան հովվապետական այցելության նպատակը: Եկեք զայն ընենք պատմական այնպիսի դեպք մը, որ երբ մեկնիմ այստեղեն, չըլլաք այն, ինչ որ էիք իմ գալես առաջ և ոչ ալ ես ըլլամ այն, ինչ որ էի իմ գալես առաջ: Թող վերանորոգության, վերածաղկումի գարնան շունչը տարածվի Ավստրալիո Սիդնեյի, Մելբուռնի, Կանբերայի, Բըրթի և ուրիշ շրջաններու մեջ ապրող մեր հայության, ինչպես նաև Մայրագույն Արևելքի ուրիշ երկիրներուն մեջ մինչև Հնդկաստան և այլ վայրեր, ուր կապրին հայ ժողովուրդի զավակները:

Թող Աստուծո շունչը, մեր հայրերու հավատքը, մեր հայրենիքի սերը դառնան երրորդություն: Աստուծո հավատքը, Եկեղեցվո սերը և հայրենիքի պաշտամունքը, ահավասիկ ինչ որ բերած եմ ձեզի մեր Մայր Հայրենիքեն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն, հանուն Աստուծո և հանուն Ազգին, հավիտյանս հավիտենից, Ամեն»:

Հավարտ հայրապետական պատգամի, տեղի ունեցավ աջահամբույրի արարողություն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԹԱՐԳՄԱՆՉԱՑ» ՇԱԲԱԹՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆ

Կարճատև հանգստից հետո, նույն օրը, հետկեսօրին, տեղական ժամանակով ժամը 13.45-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, իրեն ուղեկցողների հետ մեկտեղ, այցելեց «Թարգմանչաց» շաբաթօրյա վարժարան, ուր մեծահարգ հյուրերին դիմավորեցին մեծ շուքով ու ցնծությամբ:

Դեռևս 1965 թվականին հիմնված «Համազգային»-ի Հայ Մշակութային Միության «Թարգմանչաց» շաբաթօրյա վարժարանն արդեն իր ուրույն պատմությունն ունի, իր նվաճումներն ու ձեռքբերումները: Հենց այդ հայորեն անցած ու անցնելիք ուղու գիտակցումով դիմավորեցին Նորին Սրբությանը վարժարանի ուսուցչական կազմն ու աշակերտությունը: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, ամենքն առաջնորդվեցին դեպի վարժարանի հանդիսությունների սրահ՝ մասնակցելու հատուկ պատրաստած գրական-գեղարվեստական միջոցառմանը:

Հայտագիրն սկսվեց բարիգալատյան խոսքերով: Առաջինը Ամենայն Հայոց Հայրապետին ուսուցչական կազմի և աշակերտության անունից սրտի խոսք ասաց վարժարանի տնօրինուհի տիկին Զարուհի Մանուկյանը, այնուհետև այն երկրորդեց Համազգայինի «Շանթ» մասնաճյուղի ներկայացուցիչ տիար Հակոբ Աբուլաքյանը՝ իր խոսքում մասնավորաբար նշելով.

«Վեհափառ Հայրապետ,
Սրբազան Հայր,
Ուսուցիչներ, աշակերտներ և ծնողներ.

Մարդկային կյանքի մեջ բացառիկ և պատեհ առիթներ շատ քիչ կպատահեն:

Տարիներ շարունակ զգալի եղած է Ամենայն Հայոց Հայրապետի մը

այցելությունը «Համազգային»-ի կրթական ընտանիքեն ներս: Սակայն այսօր մեզի և մեր ընտանիքին համար շատ մեծ պատիվ և ուրախություն է՝ ունենալ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը, հանձինս Վեհափառ Գարեգին Ա Հայրապետի, որ մեր մեջն է: Շատ կարիքը ունինք, Վեհափառ Հայրապետ, ստանալու Ձերդ Սրբության կրթական և հոգևոր սնունդը: Պատեհ առիթը չենք ուզեր փախցնել:

Վեհափառ Հայրապետ, հավատարիմ պիտի մնանք մեր Սուրբ Եկեղեցիին, Մայր Աթոռին և մեր Հայրենիքին:

Այս մեր սրտաբուխ խոսքերը Ձեզի հետ տարեք Հայրենիք և հաղորդեք մեր քույրերուն և եղբայրներուն ի Հայաստան»:

Ապա Վարժարանի աշակերտությունը հանդես եկավ գեղեցիկ հայտագրով, հինթացս որի հնչեցին հոգևոր և հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ, կատարվեցին բեմականացված փոքրիկ ստեղծագործություններ:

Վերջում ամենքին իր հայրապետական պատգամը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Շնորհակալություն հայտնելով այսքան ջերմ ու սիրալիր ընդունելության, ինչպես նաև իր հասցեին ասված գնահատանքի խոսքերի համար, Նորին Սրբությունը բարձր գնահատեց իրենց հայեցի նկարագիրը պահած, մայրենի լեզվի ակունքներին հարազատ մնացած և լուսավորչականդ հավատքի ճշմարիտ շավիղներով առաջնորդվող մատաղ սերնդին, նրանց դաստիարակներին ու ծնողներին, սրտամոտ խոսքերով տվեց իր պատգամը.

«Ապրիք, շա՛տ ապրիք, որ Հայաստանեն այսքան հեռու, Հայ Եկեղեցիին այսքան կարոտ, հայու ժպիտին այսքան սպասող այս հեռու-հեռավոր ափերուն վրա կհնչեցնեք ձեր մայրենին, այն կպահեք անաղարտ, աղբյուրի մը ակունքի պես զուլալ ու մշտահոսդ:

Կցանկամ, որ դուք միշտ այսպես նախանձախնդիր ըլլաք և մինչ իմ հաջորդ այցելությունս բազմապատկվեն ձեր հառաջընթացքն ու նվաճումները:

Կմաղթեմ ձեզի քաջառողջություն, կորով և սեր: Բայց ինչ էլ որ ընեք, ուր էլ որ երթաք, Հայրենիքը, ձեր լեզուն և ձեր հավատքը մի՛ մոռնաք:

Աստված պահի, պահպանի ձեզ. ամեն»:

ՀԲԸՄ-Ի «ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

«Թարգմանչաց» վարժարանից Նորին Սուրբ Օծությունը, իր շքախմբի ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» շաբաթօրյա վարժարան՝ հանդիպելու ուսուցիչների և աշակերտների հետ, տալու իր հայրական օրհնանքը, կրուցելու և մոտիկից ծանոթանալու նրանց հետ:

Այստեղ ևս Հայոց Հայրապետին դիմավորեցին ավանդական աղ ու հացով, ծափողջույններով, բարիգալստյան խոսքերով:

Աշակերտության անունից դիմելով Հայոց Հայրապետին, 7-րդ դասարանի աշակերտ Մայքլ Բոյաջյանն իր ողջույնի խոսքում ասաց.

«Վեհափառ Տեր. պատմական է այս պահը, և մենք պատմության վկաները, ինչպես մենք վկաներն ենք ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկյան» շաբաթօրյա վարժարանի կրթական գործունեության: Մենք, այո՛,

պտուղն ենք այս ծառին, որ Բարեգործականի մեծ մրգաստանին մեջ ունի իր ուրույն տեղը:

Կրթական այս օջախը մեր աշակերտական տարիներուն եղած է դարբինը, կապող օղակը Հայրենիքին, հայ լեզվին, մշակույթին, և մենք, հարստացած ու զինված մեսրոպաձին, աստվածատուր տառերով, կդիմագրավենք մեր առօրյան բարի լույսով և «Հայր մեր»-ով և Սիդնեյի ափերը կմոտենան Սևանին և գրեթե կմիաձուլվին և բազմամշակութային այս քաղաքին մեջ մենք կդառնանք «Աղթամար»:

Վեհափառ Տեր. Ձեր ներկայությունը նոր թափ և եռանդ կստեղծե՝ հույս, հավատք և սեր, ինչպես նաև Սփյուռքի մեր այս հողը կդարձնե փխրուն նորանոր տունկերու համար և անգամ մը ևս կհամոզվինք, որ մենք առանձին չենք:

Շնորհակալություն Ձեր շնորհաբեր այցելության համար և լավագույն մաղթանքներ՝ Լուսավորչի գահը և կանթեղը միշտ պայծառ ու վառ պահելու ի շահ մեզի հաջորդող և գալիք բոլոր սերունդներուն»:

Նորին Սուրբ Օծությանը բարիգալստյան խոսքեր հղեց նաև վարժարանի տնօրինուհի տիկին Սիլվա Աղաբեկյանը.

«Վեհափառ Տեր, Առաջնորդ Սրբազան Հայր, վարչական անդամներ, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ և շատ սիրելի ներկաներ.

Մոտ երկու հազար տարի առաջ առաքյալներեն Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդողիմեոս առաջին անգամ Հայաստան բերին Ամենափրկիչին պատգամը, այսօր մենք նույն այդ պատգամը կստանանք առաքյալներուն արժանահաջորդ Հայ Եկեղեցվո Ծայրագույն Պատրիարքին կողմե:

Վեհափառ Տեր, այսօր Սփյուռքի հայության, ավստրալահայության և մասնավորաբար մեզի համար ուրախության տոն է, համեստաբար հյուրընկալել Ձեզ ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկյան» շաբաթօրյա վարժարանեն ներս և ստանալ Ձեր պատգամն ու օրհնությունը:

Եղեռնեն վերջ, երբ սկսավ կազմվիլ հայ լայնածավալ Սփյուռքը, հայու բեկորները հասան նաև Հարավային կիսագունդի հյուրընկալ այս ափերը և այսօր կներկայանանք որպես հասուն և կազմված գաղութ:

Ճանապարհը, ինչպես բոլոր գաղութներուն համար, դյուրին չէր, իսկ այսօր մենք ևս կվայելենք Հայաստանի բարգավաճումը և Հայ Եկեղեցիին այլակերպությունը և կբերենք մեր համեստ լուման: Վեհափառ Տեր, 1966 թվականին այս վարժարանը իր հիմերը դրավ Եկեղեցվո նախաձեռնությամբ և հովանավորությամբ, երբ նույն շրջանին, այս գաղութեն ներս ևս, կսկսեին ծաղկիլ Սփյուռքի երրորդությունը՝ Եկեղեցի, դպրոց, սրահ. հայապահպանումի երեք այուները: Այսօր հասուն կանգնած մեր հիմերուն վրա, հպարտությամբ կանդրադառնանք և կնշենք, որ Կ. Պոլսո Ամենապատիվ Պատրիարք Գարեգին արք. Գազանճյան եղած է տեսուչ այս վարժարանին, ինչպես նաև մեր սիրելի Առաջնորդ Աղան արք. Պալիոզյանը:

ՀԲԸՄ-ի «Ա. Մանուկյան» շաբաթօրյա վարժարանը, հավատարիմ իր առաքելության, կշարունակե դաստիարակչական գործը՝ հայեցի կրթություն ջամբելով մեր մատղաշ սերունդին, սպասարկելով հարյուր աշակերտներու բաժնված մանկապարտեզի և նախակրթարանի 7 դասարաններու միջև:

Այսօր Սփյուռքում հայապահպանումի գործընթացը, շնորհիվ հայրենի պետականության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ստացած է նոր

ուղղություն, նոր բևեռում և Ձեր ներկայությունը այստեղ ատոր լավագույն գրականն է, և մեզի՝ ՀԲԸՄ-ի վարչության, տնօրինության, ուսուցչական կազմին և աշակերտության համար պատիվ մըն է ողջունել Ձեզ այս հարկեն ներս և խոնարհիլ ի համբույր Ձեր Սուրբ Աջույն և հայտարարել, որ մենք ևս պատրաստ ենք համահայկական այս նոր առաքելության:

Շնորհակալություն այս վեհ ու պատմական առիթին, Վեհափառ Տեր, տնօրինության, ուսուցչական կազմին և աշակերտության անունով Ձեզի բարի կեցություն կմաղթենք, ինչպես նաև քաջառողջություն, արևշատություն և բեղուն աշխատանք ի շահ ազգիս հայոց և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի»:

Հայոց Հայրապետն ապա ունկնդրեց գեղեցիկ հայտագիրը, որ պատրաստվել էր ի պատիվ իր այցելության, և վերջում պատգամեց լինել հայրենասեր, հայասեր ու քաջարի, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ ազնիվ նկարագիր: Վեհափառ Հայրապետը մեծապես գնահատեց ՀԲԸՄ-ի ծավալած գործունեությունը հայության կյանքում, որը Մեծ Եղեռնից հետո կարողացավ նպաստել հայության կյանքի վերականգնումի և հայապահպանության գործին, որի շոշափելի վկան Ավստրալիո հեռավոր ափերի, աշխույժ, կենսալից կյանքով ապրող այս դպրոցն է:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ» ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Ամենայն Հայոց Հայրապետը այցելեց նաև Ամենայն Հայոց Բանաստեղծի անունը կրող հայկական դպրոց, ուր իրենց սեփական ժողովրդի նկարագիրն են կերտում մատաղ սերնդի ներկայացուցիչները: «Թումանյան» շաբաթօրյա դպրոցում Նորին Սրբությունը հյուրընկալվեց ջերմ սիրով ու մեծ ոգևորությամբ, ունկնդրեց ի պատիվ իրեն կազմված փոքրիկ գեղարվեստական հայտագիրը, մոտիկից ծանոթացավ նրանց առօրյային, ուսուցանվող առարկաներին, դասավանդման մեթոդներին, մաղթեց նրանց բարձր առաջադիմություն և ապագայում մեծամեծ նվաճումներ՝ ի շահ հայ ժողովրդի, ի բարօրություն Հայաստան երկրի և ի հաստատություն Հայոց Եկեղեցու:

Վեհափառ Հայրապետը կրթօջախներ կատարած իր այցելություններով և իր խոնարհ վարվելակերպով, հայրենաշունչ ու հայրենասիրական խոսքերով հմայեց մանուկներին: Նա Հայրենիքից տարած իր հուշանվերները փոխանցեց դպրոցների տնօրինություններին և ուսուցչական կազմերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ «ՌԻՋԸՆԹ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, «Ռիջընթ» հյուրանոցի սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ պաշտոնական և հոգևոր բարձրաստիճան հյուրերի: Ներկա էին Ավստրալիայի Եկեղեցիների

Սկզային Խորհրդի ընդհանուր քարտուղար Դեյվիդ Գիլը, Հունաց կաթողիկե և Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները, Սիդնեյի Անգլիկան Եկեղեցու արքեպիսկոպոս Գուդյուն, բարձրաստիճան պաշտոնյաներ, Ավստրալիայում հավատարմագրված դիվանագետներ:

Հընթացս ճաշկերույթի, բարեողջույնի խոսքեր ասացին Ավստրալիայի Եկեղեցիների Սկզային Խորհրդի գլխավոր քարտուղար վերապատվելի Դեյվիդ Գիլը, ընդդիմության ղեկավար պարոն Պետեր Քոլինկը, Ջոն Ջոնսոնը և ուրիշներ:

Վերջում շնորհակալության ու երախտիքի խոսք ասաց Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը անգլերեն լեզվով վերլուծեց Հայց. Եկեղեցու և հայ ժողովրդի ու Հայրենիքի կյանքում ստեղծված նոր իրողությունները և շնորհակալություն հայտնեց այն աջակցության համար, որ Ավստրալիո պետական, քաղաքական և եկեղեցական իշխանությունները ընձեռում են Ավստրալիայի հայ համայնքին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԴՈԼՈՐԵՍԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 16-ի կիրակի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց Չեցվուդի շրջան, Դոլորեսի Ս. Աստվածածին Կաթողիկե եկեղեցի (Our Lady of Dolores): Եկեղեցին լեփ-լեցուն էր հապարավոր հայորդիներով: Ամենքը եկել էին մասնակցելու մատուցվելիք հայրապետական Սուրբ և անմահ Պատարագին, Ս. Հաղորդության խորհրդով միանալու Աստծուն, իրենց սրտերում վերընձյուղելու Երկնառաք Վարդապետի ավանդած՝ սերը:

«Հրաշափառով» և հանդիսավոր թափորի առաջնորդությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց եկեղեցի և առաջնորդվեց դեպի Սվագ Խորան:

Հայրապետական Պատարագն սկսվեց ժամը 10.30-ին:

Հընթացս սրբական արարողության, նախ, հավատացյալների խուռներամ բազմությանը դիմելով, բարեմաղթանքի խոսք ասաց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց Առաջնորդ Աղան արք. Պալիոկյանը՝ հատկապես նշելով.

«Մեզի համար որպես եկեղեցական և ձեզի համար որպես աշխարհականներ, հոգեկան մեծ ուրախություն է Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը ընդունիլ մեր մեջ: Վեհափառ Հայրապետը կուգա մեր Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնեն, ուրկե հավատքը տարածվեցավ Հայաստան աշխարհին մեջ ու Հայաստանեն դուրս այն բոլոր գաղութներուն, այն բոլոր եկեղեցիներուն, ուր հայ հավատացյալը կգտնվի: Ամենայն Հայոց Կաթողիկոսի մը առաջին և պատմական այցելությունն է Ավստրալիա ու այդ պատմական այցելությունը մենք պետք է վերածենք հոգեկան վերանորոգման, հավատքի վերակերտման և հայրենասիրության առիթի մը: Ու վստահ եմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր հայրապետական պատգամով և օրհնությամբ մեզի նոր ուղի մը և նոր ճանապարհ պիտի բանա, որպեսզի մենք կարողանանք այդ նոր ճանապարհներեն քալել մեր Եկեղեցիին և մեր

Հայրենիքին փառքի ու մեծության համար: Ու ինչպես բազում առիթներով ըսվեցավ, շուտով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կտոնախմբե 1700-ամյակը քրիստոնեությունը պետականորեն ընդունելու: Ու Վեհափառ Հայրապետը այդ գործունեության, այդ ոգեկոչման ու հիշատակի խթանիչը և մղիչ ուժը եղավ այն օրեն, որ բազմեցավ Ս. Գրիգոր Լուսավորչի գահին վրա:

Մինչև այդ թվականը մենք զմեզ պետք է վերանորոգենք մեր հավատքի մեջ, պետք է վերանորոգենք մեր մարդկային գիտակցությանը մեջ, պետք է վերանորոգենք մեր հայրենասիրական գիտակցության և զգացումներուն մեջ»:

Սրբական Հոր խոսքերից հետո, եկեղեցում ներկա հավատացյալներին իր հայրապետական պատգամը հղեց Գարեգին Ա Հայրապետը.

«Սիրելի Սրբազան Հայր,
հոգևոր եղբայրներ ի Քրիստոս
և շատ սիրելի հավատացյալներ.

Պարտք կզգամ իմ խորը շնորհակալությունները և հայրապետական բարձրագույն աստիճանի գնահատանքը հայտնելու Ավստրալիո մեր թեմին Առաջնորդ Սրբազանին՝ Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին, Թեմական Խորհրդին, հոգևորականաց դասուն, բոլոր կազմակերպություններուն, բոլոր հաստատություններուն, ընդունելության հանձնախումբի կազմակերպիչ անդամներուն և ձեզ բոլորիդ, որ այսպես քրիստոնեավայել և հայավայել վերաբերումով ընդունեցիք ձեր հոգևոր առաջին ծառան մեր Եկեղեցվո Հովվապետական իշխանությունը իր ուսերուն վրա շալկած Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Կաղոթեմ ի բոլոր սրտե, որ Ավստրալիո և Ծայրագույն Արևելքի այլ երկիրներուն մեջ այսօր իրենց կյանքը ապրող մեր ժողովուրդի զավակները նորե-նոր աճեն հոգիով, բյուրեղանան մտքով, սրբանան սրտով, պրկվին կամքով և նային վառ աչքերով, վառ հույսերով դեպի մեր հայոց ապագան:

«Յանուն Հօր, եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Եղերուք կատարեալ, որպէս եւ Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է»:

Այսօրվան Ավետարանին մեջ վերջին տողերը այս խորունկ բառերն էին Հիսուսի շրթներեն առ Աստված արտասանված:

Մենք այսօր մտած ենք արդեն Մեծի Պահոց շրջանին մեջ: Ապաշխարության քառասնօրյա այն շրջանը, որտեղ մեր Եկեղեցին մեզ կհրավիրե մեր աչքերը շրջապատեն, ուրիշներեն կտրելու և մեր նայվածքը մեր հոգիին մեջը սուզելու:

Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ես: Ե՞մ արդյոք այն, ինչ որ կուզեմ ըլլալ, ե՞մ արդյոք այն, ինչ որ Աստված կուզե, որ ըլլամ: Եվ եթե չեմ, ինչո՞ւ չեմ: Ո՞ւր է արգելքը, ո՞ւր է այն պատճառը, որ զիս հեռու կպահե իմ իսկ անձեն, Աստուծո պատկերով ստեղծված իմ սեփական անձեն: Ահավասիկ հարցումներ, որոնք մարդիկ պարտավոր են հարցնել, որպեսզի ճանչնան իրենք զիրենք: Մեր խոսքերը ուրիշներու մասին, մեր խոսքերը ուրիշներու հետ թող նվազին այս քառասուն օրերուն և խոսակցինք մենք մեզի հետ, յուրաքանչյուրն ինք իրեն հետ:

Այսօր, սիրելի եղբայրներ և քույրեր, անդրանիկ հովվապետական Պատարագս է, որ կմատուցեմ այս հողին վրա Ավստրալիո: Այս պահը պատմական է: Եվ կուզեմ, որ բոլորդ ալ գիտնաք, որ Մեծ Պահքին կզուգադիպի և ունինք քառասուն օրեր մեր առաջ, մինչև Հարության

տոնը, մինչև Զատկի տոնը և այս քառասուն օրերը պետք է ըլլան մեզ համար, եթե ճշմարտորեն մենք քրիստոնյա ենք, եթե ճշմարտորեն հայ քրիստոնյա ենք, պետք է ըլլան ներքին զգաստացման, շտկումի, ուղղվածության, մաքրության պահեր: «Ի ներքս ի քեզ ունիս զվարդապետդ», - կըսե Գրիգոր Տաթևացին: Քո մեջդ է վարդապետությունը, խիղճը: Նայի՛ր խղճիդ և դու այնտեղ կրնաս տեսնել, թե ո՞ւր ես և ո՞ւր պետք է որ ըլլաս:

Սիրելիներ, մենք հազար մեկ ցավեր ունինք տակավին մեր ազգին կյանքին մեջ: Ես կուգամ Հայաստանեն: Մեր ժողովուրդը նոր դուրս կուգա տագնապալի վիճակեն: Եվ ես նաև ճանչցած եմ մեր ժողովուրդը արտասահմանին մեջ, հատկապես այն շրջանին, երբ մենք դուրս եկանք ցեղասպանության այն ծանր օրերեն, գաղթականության, աքսորի ճամփաներեն, հաց չունեինք, հացի քիչութենեն, հացի սակավութենեն, հացի պակասեն կմեռներ մեր ժողովուրդը: Այսօր, ես ինձի թույլ կուտամ ըսելու, որ հացի շատութենեն ավելի մեռնող կա, քան հացի քիչութենեն: Ո՞վ եկեր է այս աշխարհը, հարց տվեք ձեզի, հետը բան մը բերե՞ր է և ո՞վ գացեր է այս աշխարհեն, հետը բան տարե՞ր է: Ինչ որ կրնես քու գոյությանդ, քու տարիներուդ գումարեդ, քու եղածեդ անդին, ավելի մեծ արժեքի մը, չմեռնող արժեքի մը, եկեղեցի, ազգ, գրականություն, դպրոց, լեզու, անոնք, որոնք մեզմե անդին կապրին, անոնք է, որ մեզի կտանին դեպի հավերժություն: Աշխարհը այսօր կկլանե մեզի: Ամեն օրվան մեր հաճույքներուն, մեր ունեցած այսպես կոչված առավելություններուն մեջ կանգ առնենք և մտածենք, թե ինչպե՞ս կրնանք մենք օգնել անոր, որ կարիք ունի: Հազար պատճառ կա բան մը չընելու, սակայն մեկ պատճառ կրնա ըլլալ հազար բան ընելու համար: Սերն է այդ պատճառն ու մղիչ ուժը: Ես չեմ հավատար, մի զարմանաք, բարություն բառին, ես կհավատամ բարիք բառին: Ի՞նչ է բարությունը, եթե ոչ գաղափար: Երբ կմարմնանա, բարիքի կվերածվի, այն ատեն է, որ բարությունը ճշմարտություն կդառնա, ապրված ճշմարտություն: Այս եկեղեցիեն եթե դուրս պետք է ելլեք այնպես, ինչպես ներս մտաք, ափսոս: Ես չեմ կրնար ձեզի տեսնելով, ձեր այս համախմբումը տեսնելով, ձեր կենդանի հավատքը տեսնելով ձեզ մոռանալ: Դուք ալ փոխվեցեք: Փոփոխության մեջը պատիվ կա և փոփոխությունը կենդանության՝ կյանքի նշան է, այն է, որ բարիք կբերի: Չկա կյանք առանց փոփոխության: Կյանքը առանց փոփոխության մահ է: Նայեցեք յուրաքանչյուրդ ձեր մեջ: Ո՞ւր էիք տասը տարի առաջ, ո՞ւր էիք քսան տարի առաջ, ձեր մտածումներով, ձեր գործերով և ու՞ր եք այսօր: Փոփոխություն կա ամեն տեղ: Բայց հոգեկան կյանքին մեջ փոփոխությունը արժեք ունի, երբ կվերածվի բարեփոխության: Հետևաբար, «եղերուք կատարեալ, որպէս և Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է»,- կըսե Ավետարանը:

Այսօր իմ խոսքս ավարտելեն առաջ, ես կուզեմ փոքրիկ հիշատակ մը թողուլ մեր Ավստրալիո թեմին, եկեղեցիին և ասկե ավելի գեղեցիկ մտածում մը չկրցա գտնել, քան Էջմիածնին մեջ պատրաստված սկիհը, որ երբ դուք հաղորդություն ստանաք այս սկիհեն, այդ հաղորդության մեջ Քրիստոսի մարմնույն և արյան զորությանը հետ զգաք ձեր հայրերու սուրբ շունչը, Հայաստանի մաքուր հողեն, մեր նահատակներու արյունով ներկված հողեն, մեր Սուրբերու արցունքով թրջված և մաքրված հողեն, մեր հայրերու հավատքով փորձված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շունչը զգաք այս սկիհին մեջեն:

Աստված պահե և պահպանե ձեզ: Ամեն:

Աղան արք. Պալիոկյանը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին խորհրդանշական նվերի համար, իր հերթին Նորին Սրբությանը նվիրեց Ս. Գևորգ Զորավարի Աջը, որ շուրջ 70 տարի գտնվում էր Ավստրալիայի հայոց թեմում, և ցանկացավ, որ այդ նվերի շնորհիվ ավելանա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր հարստությունը՝ ի բարգավաճումն ապագա հայոց և ի բարօրություն Հայաստանյայց Եկեղեցու:

Այնուհետև հենց Վեհափառ Հոր ձեռքից Ս. Հաղորդություն ստացան եկեղեցում ներկա բոլոր հավատացյալները:

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր: Կանոնավոր շարքով ու երկյուղածորեն մոտեցան ներկաները Հայոց Հայրապետին և ակնածանքով համբուրեցին նրա սուրբ Աջը:

Հայրապետական Ս. Պատարագից հետո, շքախումբն ու հավատացյալ ժողովուրդը, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ ուղղվեց դեպի «Արշակ և Սոֆի Գալուստյան» վարժարան, ուր պետք է տեղի ունենար համալիրի օրհնության արարողությունը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՐՇԱԿ ԵՎ ՍՈՖԻ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

16 փետրվարի, 1997 թվական, կիրակի: Հայ ժողովրդի ավելի քան 3.000 կավակներ ի մի էին եկել՝ մասնակցելու «Համազգային»-ի «Արշակ և Սոֆի Գալուստյան» վարժարանի համալիրի հանդիսավոր օրհնության արարողությանը, որ կատարվելու էր Գարեգին Հայրապետի ձեռամբ և մեծ շուքով:

Ժամը 15.00-ին վարժարան ժամանեց Վեհափառ Հայրն իր շքախմբով: Այստեղ նրանց դիմավորեցին վարժարանի պատասխանատուները, բարերարներ Տեր և Տիկին Արշակ և Սոֆի Գալուստյանները, աշակերտությունը, ինչպես նաև ժողովրդային խուռներամ բազմությունը:

Այստեղ էին նաև նահանգային իշխանությունների ներկայացուցիչներ, կրթության նախարարը, փոքրամասնությունների գրասենյակի պատասխանատու աշխատակիցներ և բաձրաստիճան այլ անձինք:

Նորին Սրբությունն առաջնորդվեց «Արշակ և Սոֆի Գալուստյան» վարժարանի, «Համազգային»-ի միօրյա վարժարանների աշակերտության ու ՀՄԸՄ-ի սկաուտական կազմերի երկկողմ շարքերի միջով և «Համազգային»-ի «Կոմիտաս» երգչախմբի «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ ուղղվեց դեպի իրեն հատկացված հատուկ բաժին:

Հայոց Հայրապետի կողքին տեղ գրավեցին նահանգի կրթության նախարար պարոն Ջոն Աքուլինան, Փոքրամասնությունների Հարցերի Գրասենյակի նախագահ պարոն Ստեփան Գրքաշարյանը, առաջնորդ Աղան արք. Պալիոկյանը, հոգևորականներ, ազգային բարերարներ տեր և տիկին Արշակ ու Սոֆի Գալուստյանները, պետական երեսփոխաններ պարոն Ջոն Ուաթ-

քինկը և պարոն Ջոն Բրոկթընը, նահանգապետի Փոքրամասնության Հարցերի խորհրդական օրիորդ Յարքա Սեփկան, ՀՅԴ Կոմիտեի ներկայացուցիչ Փանոս Մանճյանը, բարերարներ, այլ կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչներ:

Օրվա հայտագիրն սկսվեց «Հայրապետական մաղթերգ»-ով, Ավստրալիայի և Հայաստանի Հանրապետությունների հիմներգերով, հավարտ որոնց Հովհաննես Մարտոյանի և Վարուժան Գույումճյանի կողմից կարդացվեցին բացման խոսքերը:

Համազգայինի «Կոմիտաս» և վարժարանի «Նանոր» երգչախմբերի կատարմամբ հնչեց մի ընտրանի երգափունջ: Ապա 12-րդ դասարանցիներ Ալինա Խանլարյանն ու Վարանդ Մկրտիչյանը ներկայացրեցին աշակերտության խոսքը և այնուհետև Վեհափառ Հորը նվիրեցին Ավստրալիայի բնիկների արվեստը ներկայացնող աշակերտական մի աշխատանք:

Իրենց բարիգալստյան խոսքերը Վեհափառ Հորն ուղղեցին վարժարանի տնօրինուհի դոկտ. Արսինե Օշականը, «Համազգային»-ի շրջանային ներկայացուցիչ Էդի Վեցմատյանը, ՀԲԸՄ-ի շրջանային ներկայացուցիչ Պերճ Մոմջյանը, ՀՕՄ-ի շրջանային ներկայացուցիչ Մաքրուհի Քորթյանը, շրջանի ՀՅԴ Կոմիտեի ներկայացուցիչ Փանոս Մանճյանը, նահանգի կրթության նախարար Ջոն Աքուլինան և ապա առաջնորդ Աղան արք. Պալիոկյանը:

Այնուհետև խոսքը տրվեց վարժարանի խնամակալության ներկայացուցիչ պարոն Վազգեն Փայլակյանին: Վերջինս ցնծությամբ հայտարարեց, որ ազգային բարերարներ տեր և տիկին Արշակ և Սոֆի Գալուստյանները իրենց ցարդ կատարած մեկ միլիոն դոլլար նվիրատվությանն ավելացնում են ևս 250.000, ինչպես նաև տեր և տիկին Ներսես և Լեվլի Նալբանդյանները ցարդ կատարած իրենց 250.000 դոլլարին ավելացնում են 150.000 ևս, իսկ վարժարանի նորակառույց սրահը հետ այսու կոչվելու է Ներսես և Լեվլի Նալբանդյան սրահ, բարերարներ տեր և տիկին Սարգիս և Ալիս Տեր-Պետրոսյաններն իրենց ցարդ կատարած 200.000 դոլլար նվիրատվությանն ավելացնում են 50.000 ևս:

Այնուհետև խոսեց ազգային բարերար պարոն Արշակ Գալուստյանը: Հուզմունքով ներկայացրեց իր մեծ ծրագրերի իրականացման ոգևորությունն ու բերկրանքը և բեմ հրավիրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որպեսզի Նորին Սրբությունը օրհնի այս համալիրը:

Նորին Սուրբ Օծությունը, հոգևոր հայրերի ընկերակցությամբ, կատարեց Հայրապետական օրհնությունը, օրհնեց նաև վարժարանի նոր դրոշը, որ պատրաստել էր վարժարանի շրջանավարտ աշակերտուհի Նաթալի Մկրտչյանը, ինչպես նաև իջեցրեց վարժարանի օրհնության պահն արձանագրող հուշաքարի վրայի քողը: Հենց այդ պահին, ներկաների ծափողջույնների ներքո, դեպի երկինք, դեպի վեր բարձրացվեց նոր օրհնած դրոշը, դեպի երկինք սլացան նաև հայոց եռագույնի երանգներով բազմաթիվ փոքրիկ օդապարիկներ:

Ապա խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր հոգու ձայնը փոխանցելով բոլոր ներկաներին.

«Կրթասեր, մշակութասեր հայ ժողովրդի զավակներ, ամեն մարդու կյանքին մեջ որոշ պահեր կըլլան, որոնք առանձնահատուկ, անկրկնելի, անմոռանալի կմնան այդ անձի կյանքին մեջ մինչև գերեզման: Այդ պահերեն մեկն է, որ ես կապրիմ այսօր և Աստուծո նայվածքին ներքև, բաց օդին մեջ, ձեր բոլորի ներկայությամբը օրհնությունը կուտամ այն հաստատության, որ ասկե ետքը պիտի դառնա օրհնյալ տունը Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, ծաղկյալ այգին հայոց փոքր ածուին, ուր մենք հողին մեջ ձեռքերնիս խառնելով, հողեն հոգի պիտի դուրս հանենք:

Ուսուցչության հանդեպ ես կուզեմ իմ գնահատանքս հայտնել և որքան սիրտ, հոգի դնեք ձեր գործին մեջ, այնքան երջանիկ կըլլաք, նույնիսկ նեղության մեջ երջանիկ կըլլաք:

Հոգաբարձության և համազգային կազմակերպությանը ևս ըսելիք ունիմ, որ այս հաստատության վարչական պատասխանատվությունը վերցուցած է և բարձրորեն կգնահատեմ Համազգայինի այս գործը, որովհետև Համազգայինի առաքելությունն է, Լևոն Շանթերու, Նիկոլ Աղբալյաններու, Օհանջանյաններու, Գառնիկ Գյուզալյաններու, Գասպար Իփեքյաններու թողած առաքելությունն է, որ կշարունակեք հայ հոգին հայ մշակույթին տարրերովը, կենդանարար տարրերովը զարգացնելու համար մեր նոր սերունդին մեջ: Եվ կգնահատեմ հոգաբարձության տարած աշխատանքը: Հոգ չէ, թող տուներն քիչ մըն ալ բացակա ըլլան, ժողովներով թող շատ զբաղին, բայց ժողովներեն ալ ավելի թող գան դպրոցը և իրենք իրենց այս հաստատությունը իրենց ձեռքերով խնամեն, որպեսզի այս գեղակերտ շենքերը հոգիով լեցվին, մարդու ներկայությամբը ներշնչվին:

Իմ հաջորդ խոսքը բարերարներուն է: Իմ շատ սիրելի և անմոռանալի բարեկամներ Արշակ և Սոֆի և անոնց հետ միասին բոլոր այն մյուս բարերարները, որոնք դասարան մը, կամ սրահ մը կամ գրադարան մը ստեղծեցին և կբերեն իրենց նյութական բաժինը այս հոգեշինության, մարդակերտումի, հայակերտումի օջախին զարգացմանը: Դպրոց մը շինելը, մեր ժողովուրդը կըսե, կնշանակե բանտ մը գոցել:

Հաջորդ խոսքս մեր Եկեղեցուն կվերաբերի և Առաջնորդ Սրբազանին: Կփափագիմ, որ միշտ իր աչքը և իր հոգածությունը անպակաս ըլլա այս և բոլոր դպրոցներուն վրայեն, որովհետև մեր եկեղեցին մեր դպրոցին սիրտն է: Մեր դպրոցները եկեղեցիով սկսած են, մեր ուսուցիչները մեր հոգևորականները եղած են: Մեր Եկեղեցին Աստուծո թարգմանությունն է մեր ժողովուրդին և ինչպե՞ս կուզեք, որ մեր զավակները մեծնան, առանց Աստուծո հետ հաղորդակցության: Մենք պետք ունինք հոգևոր զորության և մեր վանքերն ամբողջ աղոթքի տուն չեն եղած միայն, եղած են նաև միտքի տուն, դաստիարակության կենտրոն, գիտության օջախ: Եվ այսօր ես կուզեմ մեր դպրոցներուն մեջ մեր եկեղեցիին տեղը իր դրական, շինիչ, կերտիչ ներկայությունը տեսնել:

Եվ վերջապես վերջին խոսքս կուղղեմ Սուրբ Մեսրոպին երկնքի մեջ: Դիտե մեզ այսօր և տես, թե ուր ենք մենք: Դուն Վաղարշապատին մեջ, Գողթնյաց գավառին մեջ, հեռավոր Եդեսիո և այլ քաղաքներուն մեջ գտար, կազմեցիր հայոց Այբուբենը, քո հայ ժողովուրդդ հոգևոր սովեն փրկելու համար, քո ազգային ինքնագիտակցությանդ ուժ տալու համար, քո ազգին լեզուին գիր տալու համար: Ո՛վ Սուրբ Մեսրոպ, քեզի երբ որ կուղղեմ այս խոսքերս տկար, ծունկի եկած ենք այսօր ոչ մեր Հայաստանին մեջ, այլ Ավստրալիո այս օրհնյալ հողին վրա և երկրպագությունն ունենք քո գտած և մեր ժողովուրդին կտակած Այբուբենի: Հայոց ժողովուրդը շատ բանակներ ունեցած է Տիգրան

Մեծեն սկսյալ մինչև հայ ֆեդայիները և մինչև այսօրվան մեր ազատ ու անկախ Հայաստանին Հանրապետության բանակը: Սակայն այս 36 մարտիկներու բանակը մնացել է հավիտյան և անսասան»:

Հավարտ իր պատգամի, Նորին Սրբությունը Հայրենիքից բերած բյուրեղապակյա գեղեցիկ նվերը, որ ուներ հայապատկեր ու հայաշունչ դրվագումներ, փոխանցեց վարժարանի տնօրինուհի դոկտ. Արսինե Օշականին՝ որպես օրվա խորհուրդը ամփոփող անմոռանալի մի հուշ:

Ասպիսով ավարտվեց հայտագրի պաշտոնական բաժինը: Կարճատև հանգստից հետո, Վեհափառ Տերը շրջեց վարժարանի հարկաբաժիններով, մտերմիկ զրուցեց մանուկների ու ներկա հավատացյալ ժողովրդի հետ: Ներկաներից շատերը կատարեցին սրտաբուխ նվիրատվություններ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ

Նույն օրը, կարճատև հանգստից հետո, երեկոյան ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետն իրեն ուղեկցողների հետ այցելեց Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնատեղի, ուր հյուրընկալվեց ՀԲԸՄ-ի և ՌԱԿ-ի ներկայացուցիչների ու համակիր անդամների կողմից:

Այստեղ ևս, ի պատիվ Նորին Սրբության, ներկայացվեց գրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագիր, փոխանակվեցին հուշանվերներ:

Ապա ներկաներին իր հայրական պատգամը տվեց Հայոց Վեհափառը, որում կարևորեց ՀԲԸՄ-ի մեծ դերն անցնող 90 տարիների ընթացքում՝ թելադրելով նույն ոգով շարունակել աշխատանքը ի նպաստ հայ ժողովրդի ծով կարիքների:

Գարեգին Ա Վեհափառը հատուկ հիշատակեց Ալեք Մանուկյանի անունը և «Հոգվոց» աղոթքն ասաց նրա հոգու խաղաղության համար:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԵԼՈՒՅԹԸ

Երկուշաբթի օրը, փետրվարի 17-ին, տեղական ժամանակով առավոտյան ժամը 10-ին, համաձայն նախապես համաձայնեցված ժամադրության, ԷՍ ԲԻ ԷՍ /SBS/ ռադիոյի և հեռուստատեսության կենտրոնի սրահներից մեկում Վեհափառ Հայրապետի հետ անցկացվեց հանգամանալից հարցազրույց, որը հեռարձակվեց տեղական հեռուստատեսության բոլոր կայաններով: Հարցազրույցին մասնակցում էին հեռուստատեսության և ռադիոյի աշխատակիցները, հայ մամուլի ներկայացուցիչները:

Նորին Սրբությունն ամենայն սիրով մանրամասնեց իր այցելությունը, պատասխանեց առաջադրված տարբեր բնույթի բոլոր հարցերին:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ «ԱՐՇԱԿ ԵՎ ՍՈՖԻ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՐԵՐԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հեռուստատեսային հարցազրույցից հետո, Հայոց Հայրապետն իր շքախմբով հյուրընկալվեց Համազգային Արշակ և Սոֆի

Գալուստյան բարերարների կողմից: Վերջիններս, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպել էին սիրո ճաշկերույթ, որին ներկա էին վարժարանի խնամակալության անդամները, մանկավարժները և այլ հյուրեր: Ծավալվեց մտերմիկ զրույց, որի ընթացքում Նորին Սրբությունը մեկ անգամ ևս արժևորեց բարերարների ազգանվեր և հիշատակության արժանի գործունեությունը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՍԱՈՒԹ ՈՒԵՅԼԶ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ

Փետրվարի 17-ին, երեկոյան, Նյու Սաութ Ուեյլզ նահանգի վարչապետ Բոբ Քարրն ընդունեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին:

Պաշտոնական ընդունելությանը ներկա էին պետական, դիվանագիտական բարձրաստիճան այրեր, գաղութի ներկայացուցիչներ, ինչպես նաև հայ ազգայիններ՝ թվով 200 մարդ:

Ճառերի փոխանակման պաշտոնական պահից հետո, ներկաները մտերմիկ զրույց ունեցան Նորին Սրբության հետ, կիսեցին իրենց խոհերը, ստացան հուզող հարցերի պատասխանները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԻԴՆԵՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Սիդնեյի նահանգապետարանում տեղի ունեցավ մեծ ընդունելություն: Նորին Սրբությանը ողջույնի և բարիգալստյան խոսք ուղղեց նահանգապետը՝ առանձնակի շեշտելով այն իրողությունը, որ Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունն իր հոտին առավել է կարևորվում ներկա պահին, քանի որ Հայոց Հայրապետն այս հեռավոր երկրամասի իր հայրենակիցներին բերել է վերանկախացյալ Հայաստանի և ապատության բերկրանքն ապրող հայ ժողովրդի շունչն ու ոգին: Նա ուրախություն հայտնեց՝ Հայոց Հայրապետին իր հայրենի քաղաքի նահանգապետարանում ընդունելու համար, և հավաստիացրեց, որ հետայսու ևս սիդնեյաբնակ յուրաքանչյուր հայ իրեն ավելի երջանիկ ու պարտավորված պիտի զգա՝ որպես այդ քաղաքի լիիրավ քաղաքացի:

Պատասխան խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ առանձնակի շեշտելով, որ իր ժողովուրդը, աշխարհի որ ծագում էլ ապրելիս լինի, մշտապես կարդարացնի իր վրա դրված հույսերը, բարձր կպահի հայի անունը: Նաև շնորհակալություն հայտնեց այդքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՄՏԵՐՄԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան, ավելի ուշ, ընտանեկան մթնոլորտ էր տիրում Ս. Հարություն եկեղեցու սրահում, ուր հավաքվել էին հավատավոր ժողովուրդն ու եկեղեցու կյանքի հետ սերտորեն առնչվող կազմակերպությունների ներկայացուցիչները: Ներկայացվեց

գեղարվեստական համեստ հայտագիր, հավատ որի իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ քաջալերելով, որ սիրով, նվիրումով ու կոհողությամբ շարունակեն իրենց անսակարկ ծառայությունը Եկեղեցուն, որ ծառայություն է Աստծուն, ազգին ու Հայրենիքին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱՂՈԹԱՍԱՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ» ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 18-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Ս. Հարություն եկեղեցում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եղբայրակցության «Աղոթասաց Տիկնանց Միության» անդամների հետ:

Ամենայն Հայոց Հայրապետը ուշադրությամբ ունկնդրեց նրանց բարիգալստյան և ողջույնի խոսքերը, ծանոթացավ նրանց ծրագրերին, նպատակներին, առաջիկա խնդիրներին, ապա հորդորեց նախանձախնդրությամբ հետևել սեփական ծրագրումների իրականացմանը, չընկճվել դժվարությունների հանդիպելիս և մշտապես առաջնորդվել Տիրոջ ճշմարիտ ճանապարհը տանող դժվարին, բայց այնքան ցանկալի ուղով՝ այս կերպ շարունակելով ամուր պահել մեր Եկեղեցու Սրբական Հայրերի հավատքը, այն փոխանցելով նաև երիտասարդ սերնդին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԱԼԵՔՍԱՆԴՐ» ՀԱՅ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը մեկնեց Բուկֆելլի շրջան, այցելեց հայ «Ալեքսանդր» հանգստյան տուն: Այստեղ Նորին Սրբությունը նախ հանդիպում ունեցավ ծերունիների հետ, աղոթեց և օրհնեց բոլորին, ապա մասնակցեց, ի պատիվ իր այցելության, պատասխանատուների կողմից կազմակերպված հյուրասիրությանը:

Բարիգալստյան և ողջույնի խոսքերից հետո, Վեհափառ Տերը բարձր գնահատեց կատարված մարդասիրական աշխատանքը, քաջալերեց, որ անսկզբունք կամքով ու անսասան հավատքով շարունակեն այս աստվածահաճո ծառայությունը: Նորին Սրբությունն օրհնեց նաև պրն. Ալեքսանդրի հիշատակը, ում հետ նա անձամբ ծանոթ էր եղել:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԲԱՆՈՅԱՆ» ԿԵՆՏՐՈՆ

Նույն՝ փետրվարի 18-ի երեքշաբթի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, առաջնորդ Աղան արք. Պալիոկյանի, գավազանակիր Արտակ աբղ. Տիգրանյանի և Նորայր քին. Բաթանյանի ընկերակցությամբ, այցելեց Հայ Մշակութային «Բանոյան» Կենտրոն, ուր, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, «Համազգային»-ի Հայ Կրթական և Մշակութային Միության «Սևան», Հայ Օգնության Միության «Արաքս» և Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության «Նավասարդ» մասնաճյուղերի կողմից կազմակերպվել էր մեծ ընդունելություն:

Ընդունելությանը ներկա էին Անտոն վրդ. Թութունջյանը, ապգային բարերարներ Անդրանիկ և Բենիամին Բանոյանները, բարձրաստիճան պաշտոնյաներ, նահանգային խորհրդարանի երեսփոխան տիկին Ջեյնս Քրոկիոն, ՀՅԴ կոմիտեի, «Բանոյան» Կենտրոնի ինամակալության, Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի ինամակալության, «Ծիածան» և «Սարդարապատ» ռադիոժամերի տնօրինությանց, «Արմենիա» շաբաթաթերթի խմբագրության, Հայ Առաքելական Եկեղեցու Վարչության (Սիդնեյի արևմտյան շրջան), «Համապգային»-ի մեկօրյա «Փափապյան» վարժարանի ինամակալության ներկայացուցիչները և այլ հյուրեր:

Վեհափառ Հայրապետին Հայ Մշակութային «Բանոյան» Կենտրոնում ընդունեցին մեծ խանդավառությամբ և ծափողջույններով:

Ընդունելության պաշտոնական արարողությունն սկսվեց «Համապգային»-ի «Փափապյան» մեկօրյա վարժարանի աշակերտության՝ Ավստրալիայի և Հայաստանի Հանրապետությունների հիմներգերի երգեցողությամբ: Ապա ընդունելության կազմակերպիչների և ներկաների· անունից հաջորդաբար հայերենով և անգլերենով ողջունի խոսքեր ասացին տիկ. Անի Արթինյանը և օր. Ռուբինա Հակոբյանը, որին հաջորդեց գրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագիրը:

Սիդնեյի Արևմտյան շրջանում հայության, որպես համայնք, ձևավորման և շրջանում ցարդ տարված գործունեության հակիրճ նկարագիրը տվեց տիար Կիրակոս Պագալյանը:

Ողջույնի խոսք ասաց նաև Նահանգային Խորհրդարանի երեսփոխան տիկին Ջեյնս Քրոկիոն՝ անդրադառնալով հայ ժողովրդի հայրենասիրական պատմությանը: Բարձր գնահատելով Ավստրալիայի վերելքին բերած հայության մասնակցությունը՝ երեսփոխանը պատրաստակամություն հայտնեց՝ շարունակելու իր հայանպաստ գործունեությունը:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Նորին Սուրբ Օծությունը: Վեհափառ Տերը բարձր գնահատեց Սիդնեյի Արևմտյան շրջանի հայության և այդ շրջանում գործող միությունների, հաստատությունների ու կազմակերպությունների գործունեությունը և նվաճումները: Հայոց Հայրապետը իր հայրական խրախուսանքը հայտնեց Բանոյան եղբայրների բարերարության համար ի նպաստ Հայ Մշակութային «Բանոյան» Կենտրոնի կառուցման և դրվատեց երեսփոխան տիկին Ջեյնս Քրոկիոյին՝ իր հայանպաստ գործունեության համար:

Իր պատգամը փոխանցելիս, Գարեգին Ա Կաթողիկոսն անդրադարձավ հայրենասիրություն և եկեղեցասիրություն հասկացություններին, շեշտեց, թե այդ և նման հասկացությունները արժևորվում և իմաստավորվում են հանձնառությամբ, գործով, ծառայությամբ: Վեհափառ Տերը, գրեթե ամենուր, որտեղ առիթ ունեցավ իր հայրապետական պատգամը փոխանցելու, շեշտեց խոսքը գործով արժևորելու և իմաստավորելու կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Հավարտ Նորին Սրբության պատգամի, նրան հանձնեցին հուշանվեր:

Ընդունելության պաշտոնական բաժնի ավարտից հետո, ներկաները շրջապատեցին Հայոց Հայրապետին՝ առիթ ունենալով անձամբ հաղորդակցվելու նրա հետ:

Ս. ԹԵՐԵԶԱ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այնուհետև Գարեգին Ա Կաթողիկոսը, հոգևոր հայրերի և ներկաների ընկերակցությամբ, ուղղվեց Ֆեյրֆիլդ Հեյթսի (Fairfield Heights) Սուրբ Թերեզա (St. Teresa) Կաթողիկե Եկեղեցի, ուր անհամբերությամբ Վեհափառ Հայրապետի գալստյանն էր սպասում հավատացյալ հայորդիների խուռներամ բազմությունը:

«Հրաշափառ»-ով մուտք գործելով տաճար, Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի Ավագ Խորան, ուր իր կանոնական աղոթքն առաքեց առ Աստված, ապա հայրապետական պատգամը փոխանցեց ներկա հավատացյալներին: Հայոց Հայրապետը նշեց, որ առաջին անգամն է Պահոց շրջանում Կաթողիկոսական նստավայրից դուրս գտնվում, այնուհետև անդրադարձավ Մեծի Պահոց շրջանին, շեշտեց, որ պահք պահելը բավական չէ: Դա պասապահության ձևական կողմն է: Պաս պահելն իմաստավորվում է ինքնամփոփմամբ, ինքնաճանաչմամբ ու խոկումով: Աջահամբույրից հետո Եկեղեցու սրահում տեղի ունեցավ ընթրիք, որի ընթացքում ներկաներն ունկնդրեցին գեղարվեստական փոքրիկ հայտագիրը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, փետրվարի 19-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Ավստրալիայի հայկական ընկերակցության «Արշակ և Սոֆի Գալուստյան» սրահ, ուր ի մի էին եկել հավատավոր հայորդիներ, ծանոթացավ ընկերակցության գործունեությանը, աշխատակազմին, հայապահպանման գործում այս հաստատության դերին, կարևորեց նրա նշանակությունը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ-Ի «ԱԼԵՔՍԱՆԴՐ» ՎԱՐԺԱՐԱՆ

Փետրվարի 19-ի չորեքշաբթի օրը Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն այցելեց նաև ՀԲԸՄ-ի «Ալեքսանդր» վարժարան: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին ավանդական աղ ու հացով, ծափողջույններով ու ծաղկեփնջերով:

Վարժարանում Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով ուղերձ ասաց «Ալեքսանդր» վարժարանի Հոգաբարձության անդամ Զավեն Չեչճենյանը.

«Վեհափառ Տեր.

Բոլորիս համար տոն և ուրախություն է այսօր, և այս ամենը կպարտինք Ձեզի, Վեհափառ Տեր, և բարիգալստյան մեր խոսքերում կմիացնենք նաև մեր անկեղծ շնորհակալությունը, որ հակառակ բազմազբաղ և ծանրաբեռնված օրակարգին, ժամանակ կտրամադրեք և

Ձեր այցելությամբ ավելի փայլ կուտաք կրթական այս հարկին՝ ՀԲԸՄ-ի «Ալեքսանդր» վարժարանին, ուր մշակ ու հասկ անհամբեր կսպասեն Ձեր օրհնության:

«Ալեքսանդր» վարժարանը պտուղն է նվիրյալ ազգայիններու և հայեցի կրթության, լեզվին, մշակույթին հավատացող անձերու, ինչպես Ազգային Բարերար և Հերոս Տիար Ալեք Մանուկյանի, Դոկտոր և Տիկին Ալեք և Իզաբել Ալեքսանդրներու, որոնց իշխանական նվիրատվությամբ և բազմաթիվ այլ՝ նյութապես և բարոյապես սատարող ազգայիններու, ծնունդ առավ «Ալեքսանդր» Վարժարանը, որ վեց տարիե ի վեր կգտնվի Duffy's Forest-ի գեղատեսիլ և խաղաղ այս վայրին մեջ, ուր հայ գիրն ու գրականությունը և մշակույթը կդասավանդվի հավասար մյուս նյութերուն հետ

Վարժարանը արդեն երկու տարի է, ունի ավարտական դասարան և այս տարի կպատրաստվի տալ երրորդ հունձքը:

Ձեր ներկայությունը, Վեհափառ Տեր, աննախընթաց երևույթ մըն է բոլորիս համար, և Ձեր այցելությունը այսօր մեր տոմարներուն մեջ քանդակված պիտի մնա հավիտյան:

Իսկ դուք, սիրելի՛ աշակերտներ, բախտավոր եք, քանի որ կդառնաք այս պատմության վկաները, ամեն աշակերտ ամեն գաղութի մեջ չունի այս առիթը, պետք է հպարտ զգաք և ձեր տպավորությունները փոխանցեք սերնդե-սերունդ:

Ես իմ աշակերտական տարիներուս, երբ Գահիրեի Գալուստյան Ազգային Վարժարանի Ծաղիկ դասարանի աշակերտ էի, մեր վարժարանը այցելեց այն ժամանակվա Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը: Օրվա տպավորությունը և հիշատակը միշտ մտքիս մեջ վառ մնացած՝ այսօր կամուրջի մը պես կկապվի և դարձյալ բախտավոր և հպարտ կզգամ ես ինքս:

Այս օրերուս կլեցվինք կրկնակի հպարտությամբ և փառք կուտանք Աստուծո, որ մեր հայրենիք Հայաստանի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և ընդհանրապես Հայ ժողովուրդի ներկայի դժվարին օրերուն Միածինը դարձյալ իջավ Մայր Աթոռ, և որպես Սուրբ Գրիգոր Լուսավորչի արժանի հաջորդ, մեզի պարգևեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Կաթողիկոս, որ իր իմաստությամբ առաջնորդե ալեծուփ նավը դեպի խաղաղ նավահանգիստ և բոլորս միասին որպես մեկ հոտ և մեկ հովիվ դիմավորենք վաղվա արշալույսը:

Շնորհազարդ Վեհափառ Տեր, Ձեր խնկաբույր աղոթքներուն կմիացնենք նաև մեր աղոթքը և կաղերսենք, որ Ամենակարող Աստված լսե Ձեր աղաչանքները և հանգիստ պարգևե տառապյալ Ազգիս Հայոց և միևնույն ժամանակ կաղոթենք, որ Բարին Աստված պահե, պահպանե Ձեզ, բաշխե քաջառողջություն, արևշատություն, ուժ և կորով՝ գահակալելու երկար տարիներ ի պայծառություն Ազգիս Հայոց, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի»:

Ապա գրական-գեղարվեստական հայտագրով հանդես եկավ դպրոցի աշակերտությունը: Ողջույնի խոսքերի և նվերների փոխանակումից հետո, Վեհափառ Հայրապետն իրեն հատուկ դյուրահաղորդ խոսքերով դիմեց աշակերտությանը, ինչպես նաև գնահատեց տարված այն աշխատանքը, որի շնորհիվ հայեցի դաստիարակություն են ստանում դպրոցականները, քաջալերեց բարգավաճել ջանքերը և հորդորեց շարունակել տարվող մեծ աշխատանքը:

Վերջում Նորին Սրբությունը «Ալեքսանդր» վարժարանին նվիրեց բյուրեղապակյա մի ծաղկաման՝ Արարատի և Սուրբ Էջմիածնի դրվագումներով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Փետրվարի 19-ին, չորեքշաբթի օրը, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Վեհափառը, Առաջնորդ Աղան արք. Պալիոկյանի, գավազանակիր Արտակ աբղ. Տիգրանյանի և Նորայր քհն. Բաթանյանի ընկերակցությամբ, այցելեց Սիդնեյի Հայ Մշակութային Կենտրոն, ուր, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կենտրոնի խնամակալության կողմից կազմակերպվել էր գեղեցիկ ու հանդիսավոր ընդունելություն:

Այստեղ Կենտրոնի խնամակալության, Համազգայինի, ՀԲԸՄ-ի և ՀՕՄ-ի կողմից Նորին Սրբությանը ողջույնի խոսք ասաց Էդի Վեցմատյանը:

Այնուհետև Վեհափառ Տերն ունկնդրեց գրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագիրը, որը կազմակերպվել էր հատուկ Նորին Սրբության այցելության առիթով:

Հայ Մշակութային Կենտրոնի Խնամակալության ատենապետ Սարգիս Տեր-Պետրոսյանը, ողջունելով Նորին Սրբությանը, ուրախություն հայտնեց իրենց սիրելի Հայրապետին հյուրընկալելու առիթով: Ապա փոխանակվեցին հուշանվերներ: Նախ Մշակույթի Կենտրոնի անունից հուշանվեր հանձնեց տիար Տեր-Պետրոսյանը, ապա՝ Ամենայն Հայոց Վեհափառը:

Այնուհետև Վեհափառ Հոր ժամանումը Հայ Մշակութային Կենտրոն ողջունեց Հ.Յ. Դաշնակցության Կոմիտեի ներկայացուցիչ Փանոս Մանճյանը՝ կարևորությամբ նշելով, որ Հայ Մշակութային Կենտրոնը սիրով է իր հարկի տակ ընդունել ու պատվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու այն բոլոր հայրերին, ովքեր մինչ այսօր այցելել են գաղութ: Այնուհետև պարոն Մանճյանը հավատաց, որ իր կուսակցությունը միշտ եղել է և կշարունակի մնալ Հայաստանյայց Եկեղեցու կողքին:

Բարիգալատյան ու ողջույնի խոսքերից հետո իր հայրապետական պատգամը ներկաներին հղեց Նորին Սրբությունը: Բարձր գնահատելով «Համազգային»-ի գործունեությունը, Վեհափառ Հայրն անդրադարձավ հայ ժողովրդի կյանքի մի շարք խոցելի երևույթներին: Շարունակելով իր խոսքը, Հայոց Հայրապետը քննադատեց տեղի-անտեղի, երկար ու բարակ հայրենասիրական ճառեր ու բանաստեղծություններ արտասանելու և այդ ճառերով ու բանաստեղծություններով միշտ անցյալը հիշելու, այն փառաբանելու սովորությունը: Նա նշեց, որ շատ հաճախ խոսքերը չեն համապատասխանում գործերին: Ապա, բնական համարելով ներազգային գաղափարական տարակարծությունները, կոչ արեց հայությանը՝ վեր կանգնել այդ տարակարծություններից, դադարել միմյանց մեղադրելուց, սեփական հայացքն ուղղել դեպի ապագան՝ միասնաբար Հայրենիք կերտելու նախանձախնդրությամբ:

Գարեգին Ա Կաթողիկոսը շեշտեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայության այն ձգողական ուժն է, որ պիտի ի մի բերի իր բոլոր զավակներին: Հավարտ ընդունելության, Վեհափառ Տերն իր ընկերակիցներով մեկնեց Ուիլուբի քաղաքապետարան:

ՈՒԻԼՈՒԲԻ (WILLOUGHBY TOWN HALL) ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետն այցելեց Ուիլուբի քաղաքապետարան, ուր մեծաթիվ երիտասարդներ էին հավաքվել՝ մասնակցելու կազմակերպված երիտասարդական հավաքհանդիպմանը:

Գլխավոր սրահում, ուր անցկացվում էր հանդիպումը, անգամ կանգնելու տեղ չկար: Երեկոյին ներկա էին պետական գործիչներ, Ուիլուբի քաղաքապետարանի խորհուրդը, ինչպես նաև քաղաքապետուհի տիկին Ենիսե Ռայմոնդը: Տիկին Ռայմոնդը, բարիգալստյան խոսքից հետո, Վեհափառ Հայրապետին, որպես քաղաքի պատվավոր հյուրի, հանձնեց Ուիլուբ քաղաքի բանալին, նշելով, որ Ուիլուբի պատմության մեջ առաջին անգամն է, որ նման հանդիսավոր արարողություն է կատարվում:

Վեհափառ Հայրապետը փոխադարձաբար պատվեց քաղաքապետուհուն՝ վերջինիս հանձնելով հուշանվեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Այնուհետև ծավալվեց հարց ու պատասխան Ամենայն Հայոց Հայրապետի և սրահում ներկա ժողովրդի, հատկապես երիտասարդության միջև:

Սիդնեյի Հայաստանյայց Առաքելական Ս. Հարություն եկեղեցու կազմակերպած այս հավաքի ընթացքում Նորին Սրբությունը սիրով ու մատչելի անգլերենով պատասխանեց երիտասարդների հարցերին:

Հավաքը ընդմիջարկվում էր հոտնկայս ծափողջույններով, որոնք հետևում էին Հայոց Հայրապետի խորիմաստ պատասխաններին:

Հավաքի վերջում մասնակիցները դեռ շատ երկար ժամանակ խանդավառությամբ իրենց կրույցի ու խորհրդածության նյութ դարձրին Վեհափառ Հոր պատասխանները:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՎԱՐԺԱՐԱՆ

Փետրվարի 20-ի հինգշաբթի օրը, առավոտյան, Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով այցելեց Հայ Կաթողիկե համայնքի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» վարժարան, հանդիպում ունեցավ ուսուցչական կազմի և աշակերտության հետ:

Մեծ խանդավառությամբ այստեղ ընդունեցին Նորին Սրբությանը:

Օրվա հանդիսությունը սկսվեց դպրոցական քայլերգով, որից հետո աշակերտության անունից Հայոց Հայրապետին ողջույնի խոսք ասաց 10-րդ դասարանի սան Սարգիս Ճավեյանը, ի մասնավորի ասելով.

«Սիրելի Վեհափառ Հայրապետ.

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» վարժարանի տնօրինության, հոգաբարձության, ուսուցչական և ուսանողական կազմերու անունով Ձեզ բարի գալուստ կմաղթենք:

Վեհափառ Հայր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն այս հեռավոր ափերը Ձեր ներկայությունը, հոգեկան ինչպիսի՛ ուրախություն է մեր բոլորին համար: Այո՛, հոգեկան ուրախություն, որովհետև Ձեր մեջ մարմնավորված կտեսնենք մեր բազմադարյան պանծալի պատմությունը, հարուստ մշակույթը ու պապերուն երազներն ու բաղձանքները:

Ձենք կասկածիր երբե՛ք, թե Մայր Հայաստանը եղած է ու միշտ կմնա համայն հայության օրրանը:

Վեհափառ Հայրապետ, մեր ջերմեռանդ աղոթքները առ Աստված, որպեսզի շնորհե Ձեզի քաջառողջություն՝ երկար ու բեղուն առաքելություն: Մենք անհրաժեշտություն կզգանք միշտ Ձեր աչալուրջ ու հոգատար առաջնորդության, ինչպես նաև՝ Ձեր քաջալերական խոսքերուն ու հայրական օրհնության»:

Գեղարվեստական հայտագրից հետո տնօրինության խոսքը ներկայացրեց փոխտնօրինուհի Լորեն Բեդը, որում ասվում է.

«Կրսվի, թե Հռոմի մեջ, քանդակագործ մը ամեն օր կտաշեր հսկա մարմար մը: Մանուկ մը հետևողական կերպով կու գար դիտելու այս աշխատանքը: Երբ մանուկը կտեսնե, թե մարմարը կձևավորվի, կըսե. «Պարո՛ն, ինչպե՞ս գիտցաք, թե առյուծ մը պահված էր մարմարին մեջ»:

Տղան ավելի զարմացած էր քանդակագործին պատասխանեն: «Ժայռին մեջ առյուծը տեսնելեն առաջ, զինք իմ սրտիս մեջ տեսա»: «Ս. Գրիգոր Լուսավորիչ» վարժարանը օժտված է լավ և իսկական ուսուցիչներով, որոնք կրնան իրենց սրտերուն մեջ տեսնել այս փոքրիկներուն մեջ թաքնված կարողությունները: Անոնք անխոնջ կաշխատին օգնելու՝ մեր պատանիներուն, որոնց վստահած ենք մեր ապագան»:

Այնուհետև իր սրտի խոսքն ասաց դպրոցի հիմնադիր տնօրեն Անտոն Ծ. վրդ. Թութունջյանը.

«Առիթներ կան, որ այլևս մակդիրները իմաստնին կկորսնցնեն, և ավելի լավ է այդ բոլորեն վեր բարձրանալով՝ պարզորեն արտահայտվինք:

Վեհափառ Հայրապետ, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» վարժարանի աշակերտությունը, ուսուցչակազմը /ըլլան անոնք օտար, թե հայ/, տեսչությունը, հոգաբարձությունը, ինչպես նաև ես, որքա՛ն ուրախ կզգանք Ձեր ներկայությամբը այս կամարակերտ կառույցին ներքև, որն է Ավստրալիո առաջին Հայկական ամենօրյա կրթօջախը, ուր երեխաները հայեցի դաստիարակությամբ կջամբվին:

Այս հեռավոր ափերեն մեր հայացքը միշտ դեպի Մայր Հայրենիք կսևեռենք: Այսօր պետք չունինք հեռու նայելու, որովհետև այսօր մեր աշակերտները, ինչպես նաև մենք բոլորս, ականատես ենք Ձեր անձին մեջ, մեր 3.000-ամյա մշակույթի մարմնացումին և մանավանդ 1700-ամյա մեր ազգին Քրիստոնեական ապրումներուն: Ձեր անձին մեջ մեր անկախ Հայրենիքին նորանոր հույսերուն և տենչերուն դուռը կգտնենք:

Մեր վարժարանի նշանաբանը կներկայացնե արմատախիլ և վայրագորեն կոտրված կոճղ մը, որ նոր ծիլեր կհասցնե: Այդ ծիլերը՝ մեր աշակերտությունը, ոչ կրնան հառաջանալ և ոչ ալ կրնան պտուղ տալ առանց արմատներուն: Դուք եք մեր զորը մեր արմատներուն հետ և այս պատճառով որքա՛ն երախտապարտ ենք Ձեր ներկայության մեր մեջ:

Խոսքը Ձեզի տալով, Վեհափառ Հայրապետ, կխնդրենք, որ մեր արմատներեն մեզի փոխանցեք Ձեր պատգամը»:

Այնուհետև բոլոր ներկաներին և հատկապես աշակերտությանը իր հայրապետական պատգամը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հորդորելով կորավոր պահել իրենց ազգային նախանձախնդրությունը, պատիվը, վարք ու բարքը: Միշտ մոտ լինել Հայաստանյայց Եկեղեցուն, ապրել նրա հովանու ներքո, պահել ու պահպանել նախնյաց արբական ավանդները, Սուրբ Հայրերի պատգամները, ինչպես նաև սիրել Հայրենիքն ու հարազատ ժողովրդին՝ աշխարհի որ ծագում էլ որ լինեն:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

***

Օրվա երկրորդ կեսին, Անտոն ծ. վրդ. Թութունջյանի և վարժարանի ուսուցչական կազմի նախաձեռնությամբ, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվեց սիրո ճաշ, հընթացս որի փոխանակվեցին բարեմաղթանքի խոսքեր և հուշանվերներ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Փետրվարի 20-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ավստրալիայի Եկեղեցիների Ազգային Խորհրդի գրասենյակ: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին մեծ սիրով և ոգևորությամբ: Հանդիպման ընթացքում ծավալվեց մտերմիկ զրույց: Ծանոթանալով աշխատակիցների հետ՝ Վեհափառ Տերը ցանկացավ առավել ուժ և կորով՝ քրիստոսավանդ հավատքի պահպանման դժվարին գործում:

Մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը պատասխանեց աշխատակիցներին հուզող հարցերին, մանրամասնեց իր հայրապետական այցելության նպատակը, խոսեց Հայոց Աշխարհի և հայ ժողովրդի մասին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը, հետկեսօրին, տեղական ժամանակով ժամը 15.00-ին, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Սիդնեյի Հայ Ավետարանական Եկեղեցի:

Վեհափառ Հորն ընկերակցում էին Ավստրալիայի թեմի Առաջնորդ Աղան արք. Պալիոկյանը, գավազանակիր Արտակ աբղ. Տիգրանյանը և Նորայր քհն. Բաթանյանը:

Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալների խուռներամ բազմությամբ:

Նորին Սրբությունը, «Հրաշափառ»-ով մուտք գործելով եկեղեցի, ներկաների կողմից ընդունվեց ջերմ սիրով և ակնածանքով:

Բարիգալատյան և ողջույնի խոսքով Ամենայն Հայոց Հայրապետին դիմեց Ավետարանական Եկեղեցու համայնքի հովիվ վերապատվելի Գրիգոր Յումուշաքյանը:

Հավատավոր ժողովրդի, ինչպես նաև երգչախմբի կատարմամբ հնչեցին հոգևոր երգեր, որից հետո Վեհափառ Հայրապետը ներկաներին հղեց իր հայրապետական պատգամը՝ հորդորելով լինել Եկեղեցու հավատավոր ու նվիրյալ զավակներ, երբեք

չխոտորվել Տիրոջ ճանապարհից և չմոռանալ ապգային նախանձախնդրությունը:

Համատեղ աղոթքից հետո, ներկաներն առաջնորդվեցին դեպի եկեղեցու սրահ, ուր, ի պատիվ Գարեգին Ա Վեհափառի, տեղի ունեցավ հյուրասիրություն:

Այստեղ Եկեղեցու Հոգաբարձության անունից բարիգալստյան խոսք ասաց Կարո արկ. Սողոմոնյանը:

Նվերների փոխանակումից հետո դարձյալ իր պատգամը ամենքին հղեց Հայոց Հայրապետը:

ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ Ս. ԼՈՐԵՆՍ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Ավստրալիայի Եկեղեցիների Ապգային Խորհուրդը, ինչպես նաև Նյու Սաութ Ուելլսի Էկումենիկ Խորհուրդը Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին Սուրբ Լորենս Անգլիկան եկեղեցում, ուր կատարվեց էկումենիկ աղոթք: Ներկա էին բոլոր Եկեղեցիների՝ Անգլիկան, Կաթոլիկ, Օրթոդոքս Բողոքական, ներկայացուցիչները: Ողջույնի խոսքեր արտասանվեցին Դկտ. Դեյվիդ Կիլի և եկեղեցու հովվի կողմից: Հավարտորի Վեհափառ Հայրապետը քարոզով պատգամեց պահել ու կարգացնել միասնականության, սիրո ու եղբայրության աննկուն ոգին:

Արարողության վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակություն և ապա՝ սիրո ընթրիք:

Համատեղ աղոթքին և ողջ արարողությանը մասնակցում էր նաև Սիդնեյի Ս. Հարություն Հայ առաքելական եկեղեցու երգչախումբը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՈՒԱՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Փետրվարի 21-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Մաքուարի համալսարանի ցեղասպանության ամբիոնի հայկական բաժանմունք և հանդիպում ունեցավ համալսարանի փոխտնօրինուհու, ինչպես նաև պատասխանատուների հետ:

Նորին Սրբությունը ծանոթացավ նաև բաժանմունքի աշխատանքներին, գնահատեց ու քաջալերեց տարված աշխատանքը, մաղթեց, որ շարունակվի Հայ Դատի պաշտպանությունը գիտական ու փաստագրական հիմքերի վրա:

ԴԱՐՁՅԱԼ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԱՀՈՒՄ

Կեսօրին Գարեգին Ա վեհափառ Հայրապետը կարճ այցելություն տվեց Ս. Հարություն եկեղեցու սրահում հավաքված տարեց հայորդիներին: Հակիրճ կրույցից հետո Նորին Սրբությունը իր հայրական օրհնանքը տվեց նրանց, ինչպես նաև գնահատեց տարված աշխատանքը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԻԴՆԵՅԻ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Քիչ ուշ Գարեգին Ա Կաթողիկոսը ժամանեց Սիդնեյի Լիբանանյան Հյուպատոսարան, ուր մեծ շուքով ընդունվեց Լիբանանի Հանրապետության ընդհանուր հյուպատոս տիար Շուքրի Աբբուտի կողմից:

Հյուպատոսարանում, ի պատիվ Նորին Սրբության, կազմակերպվել էր մեծ ընդունելություն, որին ներկա էին քրիստոնյա և մահմեդական համայնքների հոգևոր պետերը, պետական և դիվանագիտական բարձրաստիճան այրեր, արաբ և հայ համայնքների ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի այցելության առիթով տրվեց պաշտոնական հյուրասիրություն, որի ընթացքում հնչեցին ջերմ ու սրտալից խոսքեր, փոխանակվեցին հուշանվերներ:

Վեհափառն իր խոսքում շեշտեց հայ ժողովրդի համդեպ արաբական աշխարհի, հատկապես Լիբանանի հյուրընկալ վերաբերմունքը Մեծ Եղեռնի դաժան օրերին, մաղթեց, որ նույն հարաբերությունները այսուհետև ևս շարունակվեն՝ առավել խորը արմատներ ունենալով բարեկամության հողում:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Երեկոյան Նորին Սրբությունն այցելեց Հնչակյան «Նոր սերունդ» մշակութային կենտրոն:

Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին մեծ ոգևորությամբ, ավանդական աղ ու հացով, ծափողջույններով ու ծաղիկներով:

Բարիգալստյան խոսքերից հետո, ներկայացվեց ի պատիվ Հայոց Հայրապետի կազմակերպված գեղարվեստական գեղեցիկ հայտագիրը:

Ապա Վեհափառ Տերը ծանոթացավ մշակութային կենտրոնի աշխատանքներին, նրանց անելիքներին, տվեց իր հայրական օրհնանքն ու հայրապետական պատգամը:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Փետրվարի 21-ին, ուրբաթ օրը, երեկոյան, «Համազգային»-ի «Արշակ և Սոֆի Գալուստյան» վարժարանի խնամակալության կազմակերպությամբ, Սիդնեյի Քաղաքապետարանի (Sydney Town Hall) շքեղ սրահում, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ ողջերթի ճաշկերույթ: Մոտ 460 ազգայիններ էին հավաքվել՝ հրաժեշտ տալու Նորին Սրբությանը և լսելու նրա հայրական խոսքերը:

Ճիշտ ժամը 20.00-ին սրահ ժամանեց Վեհափառ Տերը և իրեն ընկերակցողների հետ ուղղվեց դեպի պատվո սեղան:

Հայրապետական մաղթերգի, Ավետարանի և Հայաստանի Հանրապետությունների հիմներգերի կատարումից հետո, Նորին Սրբությունն օրհնեց սեղանը:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ Ս. ԼՈՐԵՆՍ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՏՀԼ ՎԱՅՀԱՌՈՆՂՈ ՂՈԷՁԱՎՍՎՈ ՁՂՈՂԿՎՏ ԻՁ ՎՈՈՆ
ՍՍԻՀՁՍԷ ՎԵՆՀԷՍՍԿ ՂՈԿՈՌՀՁԱՁ ՁՍԷՈԷՈՂՈՎՏՈՒՈ ՅՏՀՆՈՎԷՈԷ ՍՈՓՈԷՀԻ

Ապա բարիգալատյան խոսք ասաց Սեդա Բլբուլյանը, որից հետո Խնամակալության անունից սրտի խոսք ասաց Վազգեն Փալլակյանը՝ անդրադառնալով վարժարանի կատարած դերին, ինչպես նաև Ամենայն Հայոց Հայրապետի Հովվապետական այցելության առաջացրած մեծ խանդավառությանը:

Գրական-գեղարվեստական հայտագրով ավելի էր խմաստավորվում հավաքույթը, որի ընթացքում ողջերթի խոսքեր ասացին Փոքրամասնության հարցերի գրասենյակի նախագահ Ստեփան Գրքաշարյանը, Աղան արք. Պալիոկյանը, ազգային բարերար Արշակ Գալուստյանը:

Ընդմիջումից հետո հայտարարվեցին այն նվիրյալ ազգային բարերարների անունները, ովքեր այդ պահին նվիրատվություններ կատարեցին վարժարանի համար:

Ի վերջո, Արշակ Գալուստյանի հրավերով, բեմ բարձրացավ Վեհափառ Հայրապետը:

Շուրջ մեկ ժամ տևած իր պատգամով Վեհափառ Հայրապետը գրավեց բոլորի սրտերը և ոգևորեց նրանց: Հայոց Հայրապետն իր խոսքը հիմնեց դպրոց-եկեղեցի կուգորդման վրա, հավաստիացրեց, որ այս հասկացությունները անհրաժեշտ է տեսականից վերածել գործնականի: Միայն այս կերպ հայ ժողովուրդը կապրի՝ վերանորոգելով իր կյանքը:

ՀՐԱԺԵՇՏ ՍԻԴՆԵՅԻՆ

Այսպիսով, ավարտելով իր հայրապետական-հովվապետական անդրանիկ այցելությունը Սիդնեյ՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մելբուռն:

Ամենայն Հայոց Հայրապետին ճանապարհեցին բարձրաստիճան պաշտոնյաներ, տեղական կուսակցությունների և քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, ազգային բարերարներ, ինչպես նաև հավատավոր հայորդիներ:

Ամենքի շուրթերից հնչում էին ողջերթի խոսքեր՝ որդիական ջերմ սիրով շաղախված:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄԵԼԲՈՒՌՆ

Փետրվարի 22-ի շաբաթ օրվան երկար ու անհամբերությամբ էր սպասել մելբուռնահայությունը: Վաղ առավոտյան Սիդնեյ քաղաքից Մելբուռն ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուր նրան մեծ շուքով և խանդավառությամբ դիմավորեցին պետական իշխանությունների ու քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, հոգևորականներ, ինչպես նաև հայ ժողովրդի հավատավոր կավակները:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ջերմ ընդունելությունից հետո, Հայոց Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Մելբուռնի Ս. Աստվածածին հայկական եկեղեցի, ուր ի մի էր եկել համարյա ողջ մելբուռնահայությունը:

Այստեղ Վեհափառ Հայրապետին բարիգալստյան մաղթանքներ ուղղեցին Աղան արք. Պալիոկյանը և Մելբուռնի Եկեղեցիների Խորհրդի նախագահ Հեյմիշ Քրիստի Ջոնսթոնը:

Ապա ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Գարեգին Ա Կաթողիկոսը: Նա հիշեց, որ տարիներ առաջ եղել էր նույն եկեղեցում, ասելով. «Այսօր տեսնում եմ, որ հավատքը ձեր մեջ ավելի կենդանի արտահայտություն է գտել»: Ապա տեղի ունեցավ աջհամբույրի արարողություն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ «ԱԿԻՆՅԱՆ» ԴՊՐՈՑ

Նույն օրը, կարճ դադարից հետո, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց «Ակինյան» դպրոց: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին ավանդական աղ ու հացով, ծափողջույններով ու ծաղկեփնջերով: Դպրոցը կոչվում էր «Ակինյան»՝ ի հիշատակ Ավստրալիայում ապրած և գործած առաջին հայերից Ե. Ակինյանի, որ բազմօգուտ ծառայություններ է մատուցել հայ գաղութի համայնքային կազմավորման գործում:

Բարիգալստյան խոսքերից հետո, ներկայացվեց գրական-գեղարվեստական հայտագիրը, որ պատրաստվել էր ի պատիվ Նորին Սրբության այցելության:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Վեհափառ Տերը: Նորին Սրբությունը բարձրորեն և հայրաբար գնահատեց դպրոցում կատարված աշխատանքը. «Հայակերտության այս օջախը մի փոքրիկ Հայրենիք է Հայրենիքից հեռու, օտար ափերում ապրող հայորդիների համար», — եզրափակեց Վեհափառ Հայրապետը: Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇԱԲԱԹՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Քիչ ուշ, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն իրեն ուղեկցողների հետ այցելեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» շաբաթօրյա վարժարան: Շաբաթօրյա վարժարանի ուսուցչական կազմը, աշակերտությունը, ծնողները և մյուս ներկաները մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ ընդունեցին Ամենայն Հայոց Հայրապետին:

Բարեողջույնի խոսքերից հետո Նորին Սրբությունը ծանոթացավ դպրոցական կառույցին, դասավանդման մեթոդներն, դասավանդվող առարկաներին, շրջեց դասասենյակներով:

Այնուհետև Վեհափառ Տերը փոխանցեց իր հայրապետական պատգամը՝ առանձնակի շեշտադրելով մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը, հայրենասիրությունը և հարազատ ակունքներին հավատարիմ մնալը:

Գարեգին Ա Կաթողիկոսն ունկնդրեց նաև ի պատիվ իրեն կազմակերպված գրական-գեղարվեստական հայտագիրը:

Հրաժեշտից առաջ փոխանակվեցին հուշանվերներ:

ՌԺՍՂՈՄՔՄՈՒ ՂՈԵՂԿԻՈ

ՄԵԼԲՈՒՌՆ. ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՌԱՏՈՒՆԿ

ՌԺՍՂՈՅՈՔՅՈՒ ՂՈԵՂՎԿՈ

ՏՁԷ ՎՏՁԱՈՇՄՈՒ ՎԷՈՎՂՈՅՏՈՒՈ ՈՒՍԱՎԵՂՈՒԷ

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Կեսօրից հետո Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին հյուրընկալեց Ավստրալիայի Բողոքական Եկեղեցիների Միացյալ խորհուրդը:

Հանդիպմանը ներկա էին Մելբուռնի քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Կարճատև ընդունելությունից հետո Մայր տաճարում տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, որն ավարտվեց «Հայրապետական մաղթերգ»-ով և «Հայր մեր»-ով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան, «Գրանդ Հիաթ» հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Մելբուռն քաղաքի ղեկավարությունը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, մեծաթիվ ազգայիններ, բարերարներ:

Ողջույնի խոսքերի փոխանակումից հետո ծավալվեց մտերմիկ զրույց, հընթացս որի Նորին Սրբությունը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին, պատմեց Հայոց աշխարհի, հայ ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու մասին, ներկայացրեց այն խնդիրները, որոնց լուծմանը իր նպաստն է բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 23-ին, կիրակի առավոտյան, Ս. Հովհաննես Անգլիկան եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Օրվա պատարագիչն էր Վեհափառ Հայրապետի գավազանակիր Արտակ աբղ. Տիգրանյանը, իսկ քարոզիչը՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը:

Ս. Պատարագին ներկա էին շուրջ 800 հավատավոր հայորդիներ: Հընթացս արբալան արարողության, «Հայր մեր»-ից առաջ, ներկաները մեծ հուզումով ու կարոտով ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի օրհնաբեր խոսքը, որն իր մեջ պարագրում էր Հայրենի երկրի կարոտը, հարազատ ժողովրդի հանդեպ ունեցած սերն ու գորովը, հայրական գորովագութ խոսքի վեհությունը: Այն լուսաշող գալիքի պատգամն էր, արևաբույր արշալույսների ակնկալիքը:

Ավարտելով իր հայրապետական պատգամը՝ Նորին Սրբությունը, որպես հայրապետական այցելության անմոռաց հուշ, հայոց եկեղեցուն նվիրեց արծաթաձույլ սկիհ, որպեսզի ամեն մի հայորդի, երկյուղիվ և ակնածանք մուտենալով Ս. Հաղորդության խորհրդին, իր հոգու խորքում կգա նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շունչը, Հայոց երկրի հևքը, հարազատ ժողովրդի սերը հանդեպ օտար ափերում իր հայեցի նկարագիրը պահող քույրերն ու եղբայրները:

Մատուցվող Ս. Պատարագին ներկա էին քույր՝ Կաթողիկե, Լութերական, Անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և այլ հյուրեր:

Ս. Պատարագի ընթացքում Ս. Հաղորդություն ստացան մեծաթիվ հավատացյալներ:

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը նախագահեց Մելբուռնի հայ համայնքի կողմից կազմակերպված միջոցառմանը, որի ընթացքում, ողջույնի ջերմ խոսքերի փոխանակումից հետո, արտալից զրույց ընթացավ Նորին Սրբության և մելբուռնաբնակ հայ երիտասարդության միջև:

Վեհափառ Հայրապետն ամենայն մանրամասնությամբ բացատրեց նրանց հետաքրքրող խնդիրները, պատասխանեց առաջադրված բոլոր հարցերին, նաև հորդորեց՝ հավատարիմ կերպով քայլել մեր նախնյաց հավատքի շավիղներով, մշտապես հոգիներում վառ պահել սերն առ Հայրենին ու հարազատ ժողովուրդը, այցելել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ վերանորոգվելու և նոր ուժ ստանալու հավատքի այդ անսպառ աղբյուրից:

ՀՈՂՕՐՀՆԵՔԻ ԵՎ ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Մելբուռն քաղաքից դուրս Հայ Բարեգործական Ընդհանուր Միության տեղի մասնաճյուղի կողմից գնված հողակտորի օրհնության և ծառատնկման հանդիսավոր արարողությանը, որին ներկա էին ոչ միայն բարձրաստիճան պաշտոնյաներ, այլև մեծ թվով հավատացյալներ:

Հայոց Հայրապետն օրհնեց հողակտորը, մասնակցեց ծառատնկմանը և խոստացավ պատեհ առիթով այցելել այդ վայրը՝ համոզվելու համար, թե ինչպիսի՞ աշխատանքներ են կատարվել այդտեղ, և ինչպես է հավատավոր հայորդին արժևորել այդ փոքրիկ հողակտորն իր գործուն մասնակցությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ավելի ուշ Ս. Աստվածածին հայկական եկեղեցում տեղի ունեցավ հանդիպում եկեղեցու ապաստավորների, ինչպես նաև հավաքված ժողովրդի հետ: Ողջույնի խոսքերի փոխանակումից հետո, Գարեգին Ա Կաթողիկոսը ներկաներին հղեց իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնանքը, պատգամեց լինել ճշմարիտ քրիստոնյաներ, խոնարհ ու հավատավոր հայորդիներ:

Վերջում տրվեց ողջերթի ընթրիք:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԻԿՏՈՐԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Փետրվարի 24-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետն այցելեց Վիկտորիա նահանգի վարչապետ Ջեֆ Քենեթին:

Զրույցի ընթացքում, բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, պրն. Քենեթը հետաքրքրվեց Հայ Եկեղեցու ներկա կացությամբ, մանրամասնորեն տեղեկացավ Եկեղեցի-պետու-

թյուն փոխհարաբերություններին, լսեց Վեհափառ Հայրապետի հետաքրքիր բացատրությունները:

Իր հերթին ուրախություն հայտնելով այդ ջերմ հանդիպման համար, Նորին Սրբությունը չմոռացավ նշել նաև այն հանգամանքը, որ Հայրենիքից հեռու գտնվող իր ժողովրդի կավակներն այսօր մի նոր հայրենիք ունեն Ավստրալիայում, որի համար նրանք պարտական են տեղական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքին ու վստահությանը: «**Այստեղ ամեն մի հայորդի իրեն լիիրավ քաղաքացի է զգում և երկրի տեր**»,- իր խոսքում ասաց Հայոց Հայրապետը:

ԺԱՄԱՆՈՒՄ ԿԱՆԲԵՐԱ

Պրն. Քենեթի հետ հանդիպումից անմիջապես հետո, Վեհափառ Հայրապետը ճանապարհվեց օդանավակայան, որտեղից և մեկնեց Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերա:

Նորին Սրբությանը ճանապարհեցին Մելբուռնի տեղական իշխանությունների ներկայացուցիչները, քույր Եկեղեցիների հոգևորականները, հավատավոր հայորդիները այն ակնկալությամբ, որ շատ շուտով կրկին իրենց հարկի տակ կհյուրընկալեն իրենց սիրելի Վեհափառ Հորը:

ԵՐԿՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Կանբերայի օդանավակայանից Նորին Սրբությունը, իր ուղեկիցների հետ, առաջնորդվեց դեպի երկրի խորհրդարանի շենք, ուր տեղի էր ունենում հերթական նիստը: Վեհափառ Հայրապետին հրավիրեցին մասնակցել խորհրդարանի հերթական նիստին, ինչը Նորին Սուրբ Օծությունն ընդունեց մեծ սիրով: Գարեգին Ա Կաթողիկոսի ներկայությունը ողջունվեց բուռն ծափերով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

Նիստի ավարտին Վեհափառ Հայրապետն այցելեց Ավստրալիայի Հանրապետության վարչապետ Ջոն Հովարդին:

Կեսժամյա մտերմիկ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը, պրն. Հովարդի խնդրանքով, ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը: Նորին Սրբությունը խոսեց նաև Եկեղեցու նորօրյա խնդիրների, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների, այդ առիթով կազմակերպվելիք միջոցառումների, Եկեղեցի-պետություն համագործակցության և այլ հարցերի շուրջ: Պրն. վարչապետը հետաքրքրվեց նաև Հայաստանի ներկա տնտեսական և քաղաքական կացությամբ:

ՎԵՐԱԴԱՐՁ ՍԻԴՆԵՅ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 24-ին, երկուշաբթի երեկոյան, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադարձավ Սիդնեյ:

Հաջորդ օրը, փետրվարի 25-ին, օրվա երկրորդ կեսին, Սիրիայի Հանրապետության հյուպատոսարանում, ի պատիվ Նորին Սրբության, տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Ավստրալիայում հավատարմագրված դիվանագետներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգևորականներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ազգայիններ, բարերարներ և այլ հյուրեր:

Ծավալված կրույցի ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսը ոչ միայն ներկաներին ծանոթացրեց Հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու պատմությանը, այլև պատասխանեց նրանց հուզող հարցերին:

Հրաժեշտից առաջ փոխանակվեցին հուշանվերներ:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԹՐԻՔ «ՌԵՋԻՆԹ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Երեկոյան «Ռեջինթ» հյուրանոցի ընդարձակ ճաշասրահում տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի ողջերթի ընթրիքը, որի ընթացքում հնչեցին Վեհափառ Հորն ուղղված երախտագիտության ջերմ խոսքեր:

Իր հերթին Նորին Սրբությունը ևս գոհունակություն հայտնեց արտալից, անկեղծ ընդունելության համար, շեշտեց, որ Սիդնեյում անցկացրած անմոռանալի օրերը դեռ երկար խորհելու առիթներ կտան իրեն:

Փետրվարի 26-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը Սիդնեյից մեկնեց Ֆրանսիա:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Այսպիսով, ավարտելով իր անդրանիկ հայրապետական-հովվապետական այցելությունը Ֆրանսիա և Ավստրալիա, մարտի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Զվարթնոց» օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռիս միաբանները և պաշտոնեությունը:

Հասնելով Մայրավանք, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի մոտ, Նորին Սրբությունն իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված՝ հերթական այցելության բարեհաջող ավարտի, Հայաստանյայց Եկեղեցու անսասանության և հայ ժողովրդի տոկունության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադառնալուց հետո, Վեհափառ Հայրապետը իր հայրական գնահատանքն ու օրհնությունը հղեց Ավստրալահայությանը, կազմակերպված ջերմ ընդունելության համար: